Ապրանքների ազատ տեղաշարժ

2006-2009 Ազգային ծրագրի ապրանքների ազատ տեղաշարժի գլխի գերակայությունները

Ապրանքների ազատ տեղաշարժի ոլորտում գերակայությունների սահմանման անհրաժեշտությունը պայմանավորված է ԵՄ այդ ոլորտի մեծածավալ օրենսդրության՝ 3 տարում լրիվ մոտարկման անհնարինությամբ, ինչպես նաև օրենսդրության նպատակներով և կառուցվածքով, որը ինքնին կարող է հիմք ծառայել գերակայությունների ընտրության համար:

Ապրանքների ազատ տեղաշարժի մասին օրենսդրության հիմնական նպատակն է ապահովել նույնանման պահանջներ ապրանքների նկատմամբ, որը պետք է հիմք ծառայի ապրանքների ազատ ներմուծման, արտահանման և իրացման համար այն երկրներում, որոնք ներդրել են այդ օրենսդրությունը:

Ապրանքների ազատ տեղաշարժին վերաբերող օրենսդրությունը բաղկացած է երեք մասից՝ ներդաշնակված (նոր մոտեցում, հին մոտեցում և գլոբալ մոտեցում), ոչ ներդաշնակված և պետական գնումների:

Գերակայություններ սահմանելու համար օգտագործվող հիմնական հայտանիշերը ապրանքների ազատ տեղաշարժի ոլորտում հետևյալն են՝

- Հայաստանում տվյալ արտադրատեսակը արտադրելու կամ Հայաստանից արտահանելու փաստը (գերակայություն են այն ապրանքատեսակները, որոնք կարևոր դեր ունեն երկրի արտահանման մեջ).
- արտադրատեսակի որակական բնութագրերի ազդեցությունը, մարդկանց առողջության վրա (բնապաշտպանական ազդեցությունը ելնելով ծախսատարությունից և գործող մեքենաների, սարքավորումների և ապրանքների առկայությունից, չի համարվել գերակայություն ԵՄ օրենսդրության մոտարկման ներկայիս փուլում).
- ռեսուրսների քանակը, որոնք անհրաժեշտ են օրենսդրության համապատասխանեցման համար և դրանց առկայությունը.
- օրենսդրական համապատասխանեցման հնարավոր ազդեցությունը երկրի տնտեսական զարգացման վրա:

Ելնելով ծավալից, հնարավոր ազդեցություններից և երկրի տնտեսության համար հնարավոր հետևանքներից՝ գերակայություններ սահմանվել են միայն ներդաշնակեցված մասի համար:

Մասնավորապես՝ առաջին Ազգային ծրագրում չեն ընդգրկվել ներդաշնակեցված ոլորտի հետևյալ մասերը՝

- մեքենաները և դրանց կցավագոնները, երկու և երեք անիվ ունեցող մեքենաները, տրակտորները և մեքենաներին վերաբերող այլ տեխնիկական ստանդարտներ (1.1 – 1.4 ենթագլուխներ), որոնք Հայաստանում ներկայումս չեն արտադրվում, բացի դրանից, Եվրամիության խիստ անվտանգության և բնապաշտպանական հայտանիշերի միանգամից կիրառումը շահագործվող և ներմուծվող մեքենաների վրա կարող է բացասաբար անդրադառնալ երկրի հետագա տնտեսական զարգացման վրա.
- առանձին սննդամթերքների պատրաստմանը վերաբերող օրենսդրությունը, ենթագլուխ 1.5.5. (հիմնականում ներմուծվող), սննդամթերքի հիգիենային վերաբերող 1.5.9. ենթագլուխը (ծախսատարությունը և հնարավոր բացասական ազդեցությունը գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության զարգացման վրա).
- աշխատանքային մեքենաներին վերաբերող մի շարք մասերը՝ ենթագլուխներ 1.12, 1.13, 1.15 (արտահանման չնչին ծավալները և եղած մեքենաների համապատասխանեցման ծախսատարությունը, ինչպես նաև հնարավոր բացասական ազդեցությունը արդյունաբերության զարգացման վրա):

1. Սննդամթերքի ազատ տեղաշարժ

Ներածություն

Սննդամթերքի ազատ տեղաշարժի բնագավառում ԵՄ օրենսդրությունը ներառում է հին մոտեցման[1] շրջանակի դրեկտիվներ և ընդգրկում է սննդամթերքի պատրաստման, սննդի ներկայացման և պիտակավորման, սննդամթերքի հիգիենայի և աղտոտման, ինչպես նաև շրջակա միջավայրի գործոնները կարգավորող օրենսդրությունը:

Հաշվի առնելով 2006-2009 թթ. «Ապրանքների ազատ տեղաշարժ» գլխի համար սահմանված գերակայությունները՝ նշված Ազգային ծրագրի շրջանակներում չի համապատասխանեցվում առանձին սննդամթերքների պատրաստմանը և հիգիենային վերաբերող ԵՄ օրենսդրությունը:

Հայաստանում սննդամթերքի բնագավառը կանոնակարգող օրենսդրությունը ներառում է «Սննդամթերքի անվտանգության մասին»[2] ՀՀ օրենքը, «Պարենային հումքի և սննդամթերքի անվտանգությանը և սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2-III-4.9-01-2003 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին» առողջապահության նախարարության թիվ 181 հրամանը[3], «Հատկապես արագ փչացող սննդամթերքի պահպանման ժամկետները և պայմանները N2-III-4.4-1 սանիտարական կանոններն ու նորմերը հաստատելու մասին» առողջապահության նախարարության թիվ 961 հրամանը[4] և այլ ենթաօրենսդրական ակտեր, որոնք սահմանում են արտադրության, ներմուծման, արտահանման, պահեստավորման և իրացման ընթացքում սննդամթերքի հիգիենիկ, անվտանգության և մակնշման վերաբերյալ ընդհանուր պահանջներ, պարենային հումքի և սննդամթերքի անվտանգությանը և սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ, հատկապես արագ փչացող սննդամթերքի պահպանման ժամկետները և պայմանները, ինչպես նաև սննդամթերքի լաբորատոր փորձարկման կարգի վերաբերյալ դրույթներ, որոնք, սակայն, կրում են ընդհանուր բնույթ և հիմնականում չեն համապատասխանում ԵՄ պահանջներին:

Հայաստանում սննդամթերքի ազատ տեղաշարժի բնագավառում բացակայում են սննդամթերքի մաքրության չափանիշները բավարարելու համար սննդամթերքում օգտագործվող որոշ հավելումներին, սննդամթերքի պիտակավորմանը, ներկայացմանը և գովազդին, արագ սառչող կերակուրներին, իոնացնող ճառագայթման միջոցով մթերքի և սննդամթերքի մշակմանը և այլ ոլորտներին վերաբերող իրավական նորմատիվ ակտեր:

Բացի այդ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն սանիտարական պահանջներ արագ սառեցված սննդամթերքների պատրաստման մեջ օգտագործվող հումքի և պատրաստման, տեղափոխման, պահեստավորման և պահպանման համար օգտագործվող սարքավորումների[5] նկատմամբ:

2006 թվական

Սննդամթերքում ռադիոակտիվ աղտոտման առավելագույն մակարդակ սահմանելու նպատակով կմշակվի միջուկային վթարից կամ ռադիոակտիվ այլ պատահարից հետո սննդամթերքի և անասնակերի մեջ ռադիոակտիվ աղտոտման առավելագույն թույլատրելի մակարդակի մասին համապատասխան իրավական ակտի նախագիծը:

2007 թվական

Չերնոբիլի աղետից հետո երրորդ երկրներից գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման պայմանները կարգավորելու նպատակով կմշակվի Չերնոբիլի ատոմային կայանի վթարից հետո երրորդ երկրների ծագում ունեցող գյուղատնտեսական ապրանքների ներմուծման կարգը հաստատելու մասին իրավական ակտի նախագիծը:

---

[1] Հին մոտեցման ներքո տեխնիկական ներդաշնակեցման միջոցառումները հիմնված են կոնկրետ արտադրանքի առանձնահատկությունների վրա և ներառում են դրանց բնորոշ մանրամասներ՝ ի տարբերություն նոր մոտեցման, որը հիմնված է համապատասխանությունը գնահատելու ընդհանրական մոտեցումների վրա (ազդեցությունը մարդու առողջության վրա և անվտանգության մակարդակը):

[2] ՀՕ-25,108.12.1999թ.:

[3] ՀՀԳ ՆԱՏ 2003 / 11.1, 12.05.2003, հոդ. 203, 2.28.2003թ.:

[4] ՀՀԳ ՆԱՏ 2002 / 3(89), 11.02.2002, հոդ. 204, 12. 28.2001թ.:

«Սննդամթերքի մանրածախ առևտրի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2-III-4.3-04-2003 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին» 1 հունիսի 2004 թվականի թիվ 581-Ն ՀՀ առողջապահության նախարարի հրաման, ինչպես նաև 17 դեկտեմբերի 2002 թվականի թիվ 845՝ «Մեծածախ մթերային շուկաներին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.4-1 սանիտարական կանոնները հաստատելու մասին հրամանում նմանատիպ նորմեր սահմանված են սառեցված մթերքների վերաբերյալ, բայց ոչ արագ սառեցված մթերքների վերաբերյալ:

Մարդկանց, հատկապես երեխաների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նպատակով կմշակի այլ ապրանքներ նմանեցնող և սպառողների առողջությանն ու անվտանգությանը սպառնացող ապրանքների մասին համապատասխան իրավական ակտի նախագիծը:

2008 թվական

Մարդկանց, հատկապես երեխաների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նպատակով կմշավկի իրականացնող ճառագայթման միջոցով մշակված մթերքի և մթերքի բաղկացուցիչ մասերի մասին համապատասխան իրավական ակտի նախագիծը:

Հաշվի առնելով սննդամթերքի նախապատրաստման համար հավելումների, հացահատիկային մշակաբույսերի վրա հիմնված սննդամթերքի և մանուկների ու երեխաների համար մանկական կերակրի ոլորտները կանոնակարգելու անհրաժեշտությունը կմշակվեն սննդամթերքում օգտագործվող հավելումների մասին, վերամշակված հացահատիկային հիմքով և մանուկների ու երեխաների համար նախատեսված սննդամթերքի մասին, համապատասխան իրավական ակտերի նախագծերը:

Հայաստանում խոշոր եղջերավոր անասունների հաշվառման ժամանակակից համակարգի ներդրման (ներառյալ՝ գրանցումը և նույնականացումը), ինչպես նաև տավարի և եզան մսի պիտակավորման միասնական կարգի սահմանման նպատակով կմշակվի տավարի հաշվառման և գրանցման համակարգի ստեղծման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2009 թվական

Թեև ՀՀ օրենսդրությունը ներառում է առևտրային գաղտնիքի պաշտպանությանն ուղղված առավել ընդհանուր դրույթներ (օրինակ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդ. 33), սակայն պետական մարմինների կողմից սննդամթերքներ արտադրող կազմակերպությունների արտադրանքի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիության պահպանման նպատակով կմշակվի սննդի արտադրությունում արտադրական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման և տրամադրված տեղեկատվության պաշտպանության կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Հաշվի առնելով դիետաներում կամ քաշի նվազեցման համար օգտագործվող սննդի, արագ սառեցված սննդամթերքների, դիետիկ սննդամթերքի պիտակավորման, միջուկային վթարից կամ ռադիոակտիվ այլ պատահարից հետո սննդամթերքի և անասնակերի արտահանման վերաբերյալ հատուկ պայմաններ սահմանելու ոլորտները կանոնակարգելու անհրաժեշտությունը կմշակվեն մարդկանց սպառման համար նախատեսված արագ սառեցված սննդամթերքների մասին, մթերքի էներգետիկ պարունակությունը սահմանափակող դիետաներում օգտագործման համար նախատեսված սննդամթերքի մասին, միջուկային վթարից կամ ռադիոակտիվ այլ պատահարից հետո սննդամթերքի և անասնակերի արտահանման հատուկ պայմաններ սահմանելու մասին, սննդամթերքի դիետիկ պիտակավորման մասին, միջուկային վթարից կամ ռադիոակտիվ այլ պատահարից հետո սննդամթերքի և անասնակերի արտահանման հատուկ պայմաններ սահմանելու մասին համապատասխան իրավական ակտերի նախագծերը:

1.1.Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2006			
1.	«Միջուկային վթարից կամ ռադիոակտիվ այլ պատահարից հետո սննդամթերքի և անասնակերի մեջ ռադիոակտիվ աղտոտման մաքսիմալ թույլատրելի մակարդակի մասին» համապատասխան ակտի նախագծի մշակում	1987թ. դեկտեմբերի 22-ի «Միջուկային վթարից կամ ռադիոակտիվ այլ պատահարից հետո սննդամթերքի և անասնակերի մեջ ռադիոակտիվ աղտոտման մաքսիմալ թույլատրելի մակարդակի մասին» Եվրոպական Խորհրդի թիվ 3954/87 կանոնակարգ 1989թ. ապրիլի 12-ի «Միջուկային վթարից կամ ռադիոակտիվ այլ պատահարից հետո երկրորդային մթերքի մեջ ռադիոակտիվ աղտոտման մաքսիմալ թույլատրելի մակարդակի մասին» Եվրոպական Խորհրդի թիվ 944/89 կանոնակարգ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	4-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
		ԸՆԴԱՄԵՆԸ			15	
			2007			
2.	«Չերնոբիլի ատոմային կայանի վթարից հետո երրորդ երկրների ծագում ունեցող գյուղատնտեսական ապրանքների ներմուծման կարգը հաստատելու մասին» համապատասխան ակտի նախագծի մշակում	1990թ. մարտի 22-ի «Չերնոբիլի ատոմային կայանի վթարից հետո երրորդ երկրների ծագում ունեցող գյուղատնտեսական ապրանքների ներմուծման պայմանները կարգավորելու մասին» Եվրոպական Խորհրդի թիվ 737/90 կանոնակարգ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		2000թ. հուլիսի 24-ի «Չերնոբիլի ատոմակայանի պատահարից հետո երրորդ երկրների ծագում ունեցող գյուղատնտեսական ապրանքների ներմուծման ղեկավարման պայմանները սահմանող Խորհրդի թիվ 737/90 կանոնակարգի կիրառությունից հանվող ապրանքների ցանկը հաստատելու մասին» թիվ 1609/2000 կանոնակարգ				
3.	«Այլ ապրանքներ նմանեցնող և սպառողների առողջությանն ու անվտանգությանը սպառնացող ապրանքների մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	1987թ հունիսի 25-ի «Այլ ապրանքներ նմանեցնող և սպառողների առողջությանն ու անվտանգությանը սպառնացող ապրանքների վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության համապատասխանեցման մասին» Խորհրդի թիվ 87/357 դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	4-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**30**	
2008						
4.	«Իոնացնող ճառագայթման միջոցով մշակված մթերքի և մթերքի բաղկացուցիչ մասերի մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	1999թ. փետրվարի 22-ի «Իոնացնող ճառագայթման միջոցով մշակված մթերքի և մթերքի բաղկացուցիչ մասերի Համայնքային ցանկի հաստատման մասին» Եվրոպական խորհրդի թիվ 1999/3/EC դիրեկտիվ 1999թ. փետրվարի 22-ի «Իոնացնող ճառագայթման միջոցով մշակված մթերքի և մթերքի բաղկացուցիչ մասերի մասին Եվրոպական Միության անդամ երկրների օրենսդրությունների համապատասխանեցման մասին» Եվրոպական խորհրդի թիվ 1999/2	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	1-ին եռամսյակ	28	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		դիրեկտիվ				
5.	«Վերամշակված հացահատիկային հիմքով և մանուկների ո երեխաների համար նախատեսված սննդամթերքի մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	1996թ. փետրվարի 16-ի «Վերամշակված հացահատիկային հիմքով և մանուկների ու երեխաների համար նախատեսված սննդամթերքի մասին» Եվրոպական խորհրդի թիվ 96/5/EC դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	3-րդ եռամսյակ	24	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
6.	«Տավարի հաշվառման և գրանցման համակարգի ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2000թ. հուլիսի 17-ի «Տավարի հաշվառման և գրանցման համակարգի հիմնադրման և տավարի ու տավարի մսի մակնշման մասին» Եվրոպական պառլամենտի և Եվրոպական խորհրդի թիվ 1760/2000 կանոնակարգ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	3-րդ եռամսյակ	37	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
7.	«Սննդամթերքում օգտագործվող հավելումների մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	1988թ. դեկտեմբերի 21-ի «Մարդկանց սպառման համար նախատեսված սննդամթերքի մեջ օգտագործվող թույլատրելի հավելումների մասին» Խորհրդի թիվ 89/107/EEC դիրեկտիվ 1981թ. հուլիսի 28-ի «Մաքրության չափանիշները բավարարելու համար սննդամթերքում օգտագործվող որոշ հավելումների ստուգումները իրականացնելու անալիզների մեթոդների մասին» Եվրոպական հանձնաժողովի թիվ 81/712/EEC առաջին դիրեկտիվ 1994թ. հունիսի 30-ի «Սննդամթերքի մեջ օգտագործվող քաղցրացնող նյութերի մասին Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 94/35 դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	3-րդ եռամսյակ	127	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		1978թ. հուլիսի 25-ի «Սննդամթերքի մեջ օգտագործվող էմուլսարարների, կայունարարների, թանձրարարների և դոնդողանյութերի մաքրության հատուկ չափանիշները սահմանելու մասին» Խորհրդի թիվ 78/663 դիրեկտիվ 1988թ. հունիսի 22-ի «Եվրոպական հանձնաժողովի կողմից համ և բույր հաղորդող նյութերի պատրաստման ժամանակ օգտագործվող նյութերի և սուբստանցիաների ցանկը ստեղծելու մասին» Խորհրդի թիվ 88/389 որոշում 1995թ. փետրվարի 20-ի «Ներկանյութ և քաղցրացնող չհանդիսացող հավելումների մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 95/2/EC դիրեկտիվ 1994թ. հունիսի 30-ի «Սննդամթերքում ներկանյութերի օգտագործման մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 94/36 դիրեկտիվ 1988թ. հունիսի 22-ի «Սննդամթերքում համ և բույր հաղորդիչների կիրառման և դրանց արտադրության հումքանյութերի՝ անդամ պետությունների օրենսդրության				

		համապատասխանեցման մասին» Խորհրդի թիվ 88/388 դիրեկտիվ 1996թ. հոկտեմբերի 28-ի «Համայնքում՝ սննդամթերքում օգտագործվող կամ օգտագործման համար նախատեսված համ և բույր հաղորդող նյութերի կիրառման ընթացակարգը սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 2232/96 կանոնակարգ				
ԸՆԴԱՄԵՆԸ					**216**	
2009						
8.	«Մարդկանց սպառման համար նախատեսված արագ սառեցված սննդամթերքների մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	1988թ. դեկտեմբերի 21-ի «Մարդկային սպառման համար նախատեսված արագ սառեցված սննդամթերքների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների մոտարկման մասին» Խորհրդի թիվ 89/108 դիրեկտիվ 1992թ. հունվարի 31-ի «Մարդկային սպառման համար նախատեսված արագ սառեցված սննդամթերքների փոխադրելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ջերմաստիճանի վերահսկման մասին» Եվրոպական խորհրդի թիվ 92/1/EEC դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
9.	«Սննդի արտադրությունում արտադրական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման և	2001թ. սեպտեմբերի 20-ի «Եվրոպական պարլամենտի և խորհրդի թիվ 258/97	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	տրամադրված տեղեկատվության պաշտպանության կարգը հաստատելու մասին» համապատասխան ակտի նախագծի մշակում	կանոնակարգին համապատասխան՝ որոշակի տեղեկատվություն հասարակությանը հասանելի դարձնելու և տրամադրված տեղեկատվության պաշտպանության մանրամասն կարգը սահմանելու մասին» Հանձնաժողովի թիվ 1852/2001 կանոնակարգ	մարմին			
10.	«Միջուկային վթարից կամ ռադիոակտիվ այլ պատահարից հետո սննդամթերքի և անասնակերի արտահանման հատուկ պայմաններ սահմանելու մասին» համապատասխան ակտի նախագծի մշակում	1989թ. հուլիսի 18-ի «Միջուկային վթարից կամ ռադիոակտիվ այլ պատահարից հետո սննդամթերքի և անասնակերի արտահանման հատուկ պայմաններ սահմանելու մասին» Եվրոպական Խորհրդի թիվ 2219/89 կանոնակարգ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
11.	«Մթերքի էներգետիկ պարունակությունը սահմանափակող դիետաներում օգտագործման համար նախատեսված սննդամթերքի մասին» համապատասխան ակտի նախագծի մշակում	1996թ. փետրվարի 26-ի «Քաշի իջեցման նպատակով մթերքի էներգետիկ պարունակությունը սահմանափակող դիետաներում օգտագործման համար նախատեսված սննդամթերքի մասին» Եվրոպական խորհրդի 96/8 դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
12.	«Սննդամթերքի դիետիկ պիտակավորման մասին» ՀՀ կառավարության նախագծի մշակում	1990թ. սեպտեմբերի 24-ի «Սննդամթերքի դիետիկ պիտակավորման մասին» Եվրոպական խորհրդի թիվ 90/496/EEC դիրեկտիվ	ՀՀ առողջապահության նախարարություն	2-րդ եռամսյակ	19	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**79**	
ԸՆԴԱՄԵՆԸ					**340**	

1.2. Ինստիտուցիոնալ կարողություններ[6]

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ մաքսային պետական կոմիտե ՀՀ փրկարար ծառայություն	-	Միջուկային պատահարից հետո ԵՄ-ում սննդամթերքի և անասնակերի մասին դասընթաց (3 օր /2006թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀառևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Այլ ապրանքներ նմանեցնող և սպառողների առողջությանը սպառնացող ապրանքների վերահսկման մասին դասընթաց (3 օր/2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	-	Իոնացնող ճառագայթմամբ մշակված մթերքի մասին դասընթաց (3 օր/2008թ)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	Սննդամթերքի անվտանգության գործակալության ստեղծում (2007թ. 3-րդ եռամսյակ)	ԵՄ-ում երեխաների համար նախատեսված սննդամթերքի վերահսկողության մասին դասընթաց (3 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Տավարի հաշվառման և գրանցման բաժնի ստեղծում (2008)	ԵՄ-ում տավարի հաշվառման և գրանցման համակարգի մասին դասընթաց (3 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
6.	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	-	Սննդամթերքում օգտագործվող հավելումների մասին դասընթաց (5օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
7.	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	-	Մարդկային սպառման համար նախատեսված արագ սառեցված սննդամթերքի մասին դասընթաց (3 օր/2009թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
8.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Եվրամիությունում արտադրական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման մասին դասընթաց (3 օր/2009թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[6] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

2 . Քիմիական արտադրանք

Ներածություն

Քիմիական արտադրանքի բնագավառում ԵՄ օրենսդրությունը դասվում է հին մոտեցման[7] դիրեկտիվների շարքին և կարգավորում[8] է վտանգավոր նյութերի և պատրաստուկների դասակարգմանը, կոդավորմանը, փաթեթավորմանը, պիտակավորմանը, հատուկ նախազգուշացնող նշաններով մակնշմանը վերաբերող խնդիրները և վտանգավոր նյութերի ռիսկերի գնահատման և վերահսկման մեթոդները և սկզբունքները:

Սույն բնագավառում ԵՄ օրենսդրությունը նպատակաուղղված է Համայնքի տարածքում քիմիական արտադրանքի ազատ տեղաշարժի ապահովմանը, մարդկանց և կենդանիների առողջության և անվտանգության, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանման հետ կապված խնդիրների կարգավորմանը:

Չնայած Հայաստանի Հանրապետությունն ակտիվորեն մասնակցում է քիմիական անվտանգության բնագավառում միջազգային գործընթացներին և ստորագրել է մի շարք համաձայնագրեր, սակայն ՀՀ այդ ոլորտի օրենսդրությունը կրում է ընդհանուր բնույթ, չի մանրամասնեցված, ուստի լիարժեք չէ և հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը: Ելնելով քիմիական արտադրանքի առանձնահատկություններից (մարդու առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի ազդեցությունների սերտ փոխկապվածություն)՝ տվյալ ենթագլխի կազմի մեջ մտնող ԵՄ օրենսդրական բոլոր ակտերը ենթակա են համապատասխանեցման 2006-2009թթ. ընթացքում:

2006 թվական

Քիմիական փորձերի կատարման օրինակելի լաբորատոր վարվելակերպի ներդրման և դրա կիրառման վերահսկողության սահմանման նպատակով[9,10] կմշակվի «Կրկնակի ստուգումների բացառման նպատակով լաբորատոր փորձարկումների համընդհանուր մեթոդների կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2007 թվական

Քիմիական ազդանյութերի հետ կապված վտանգներից աշխատողների առողջությունը և անվտանգությունը պաշտպանելու նպատակով[11] կմշակվի «Աշխատատեղում քիմիական նյութերի ներգործությունից աշխատողների առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու մասին կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2008 թվական

Մարդու և կենդանիների առողջության, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով վտանգ ներկայացնող նյութերի և պատրաստուկների դասակարգման, փաթեթավորման և պիտակավորման նկատմամբ պահանջներ սահմանելու նպատակով[12,13], ինչպես նաև վտանգավոր քիմիկատների արտահանումը և ներկրումը կանոնակարգելու նպատակով կմշակվի «Վտանգավոր նյութերի և պատրաստուկների դասակարգման, փաթեթավորման և պիտակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

---

[7] Հին մոտեցման ներքո տեխնիկական ներդաշնակեցման միջոցառումները հիմնված են կոնկրետ արտադրանքի առանձնահատկությունների վրա և ներառում են դրանց բնորոշ մանրամասնություններ՝ ի տարբերություն նոր մոտեցման, որը հիմնված է համապատասխանությունը գնահատելու ընդհանրական մոտեցումների վրա (ազդեցությունը մարդու առողջության վրա և անվտանգության մակարդակը):

[8] Պետք է նշել, որ քիմիական արտադրանքին առնչվող նորմերը սահմանվում են բացի ապրանքների ազատ տեղաշարժին վերաբերող գլխից, նաև բնապահպանության, սպառողների իրավունքների և մարդկանց առողջության մասին ԵՄ օրենսդրության գլուխներում, ինչպես նաև ապրանքների ազատ տեղաշարժի գլխի սննդամթերքին նվիրված ենթագլխում:

[9] «Օրինակելի լաբորատոր գործելակերպի սկզբունքների կիրառման և քիմիական նյութերի վրա փորձերի համար դրանց կիրառումների վերահսկման վերաբերյալ օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի ներդաշնակեցման մասին» Եվրոպական խորհրդարանխորհրդարանի և Խորհրդի 2004թ. փետրվարի 11-ի 2004/10/EC դիրեկտիվ:

[10] «Օրինակելի լաբորատոր գործելակերպի (Good Laboratory Practice - GLP) տեսչական ստուգման և վերահսկման վերաբերյալ» Եվրոպական խորհրդարանխորհրդարանի և Խորհրդի 2004թ. փետրվարի 11-ի 2004/9/EC դիրեկտիվ:

[11] «Աշխատանքի ժամանակ քիմիական ազդանյութերի հետ կապված ռիսկերից աշխատողների առողջությունը և անվտանգությունը պաշտպանելու մասին» Խորհրդի 1998 թ. ապրիլի 7-ի 98/24/EC դիրեկտիվ:

[12] «Վտանգավոր նյութերի դասակարգմանը, փաթեթավորմանը և պիտակավորմանը վերաբերող օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի դրույթների մոտարկման մասին» Խորհրդի 1967թ. հունիսի 27-ի 67/548/EEC դիրեկտիվ:

[13] «Վտանգավոր պատրաստուկների դասակարգման, փաթեթավորման և պիտակավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1999թ. մայիսի 31-ի 1999/45/EC դիրեկտիվ:

2003թ. հունվարի 28-ի Եվրոպական պառլամենտի և խորհրդի 304/2003 կանոնակարգի հիման վրա[14] փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «1998 թվականի փետրվարի 3-ի «Ագրարային կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 171 որոշման մեջ:

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է վտանգավոր քիմիական նյութերին և պեստիցիդներին վերաբերող Ռոտերդամի կոնվենցիան[15], սակայն նշված կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումը ապահովող ազգային կանոնակարգը մինչ օրս բացակայում է[16], ուստի կմշակվի «Վտանգավոր նյութեր պարունակող խոշոր վթարների վտանգները վերահսկելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2009 թվական

Ներկայումս ԵՄ շուկա հանվող քիմիական նյութերի անվտանգության ապահովումը ապացուցելու պարտավորությունը կրում են դրանք արտադրող կամ ներմուծող անձինք:

Վտանգավոր նյութերի ռիսկերի գնահատման և վերահսկման մեթոդների և սկզբունքների կանոնակարգման[17], դրանց նկատմամբ սահմանափակումներ կիրառելու, ինչպես նաև որոշակի առաջնային նյութեր արտադրողների և ներմուծողների նկատմամբ լրացուցիչ տեղեկատվության և փորձարկման պահանջներ սահմանելու նպատակով կմշակվի որոշ նյութերի ռիսկերի գնահատման և վերահսկման, ինչպես նաև տեղեկատվության բացահայտման և փորձարկման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

---

[14] 2003թ. հունվարի 28-ի «Վտանգավոր քիմիկատների արտահանման և ներկրման մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի 304/2003 կանոնակարգ

[15] Խորհրդի 2002թ. դեկտեմբերի 19-ի 2003/106/EC որոշում, որը Եվրահամայնքի անունից հաստատում է Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի եւ պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին Ռոտերդամի կոնվենցիան:

[16] Ներկայումս ՀՀ-ում օգտագործման համար թույլատրված ցանկ՝ հաստատված ՀՀ կառավարության որոշմամբ, գոյություն ունի միայն թունաքիմիկատների վերաբերյալ:

[17] Խորհրդի 1993 թ. մարտի 23-ի N 793/93 Կանոնակարգ՝ առկա նյութերի ռիսկերի գնահատման և վերահսկման մասին:

2.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2006			
1.	«Կրկնակի ստուգումների բացառման նպատակով լաբորատոր փորձարկումների համընդհանուր մեթոդների կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2004թ. փետրվարի 11-ի «Օրինակելի լաբորատոր գործելակերպի (GLP) տեսչական ստուգման և վերահսկման մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 2004/9 դիրեկտիվ 2004թ. փետրվարի 11-ի «Օրինակելի լաբորատոր գործելակերպի սկզբունքների կիրառման և քիմիական նյութերի վրա փորձերի համար դրանց կիրառումների վերահսկման վերաբերյալ օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի ներդաշնակեցման մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 2004/10/EC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ կիսամյակ	32	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		32	
			2007			
2.	«Աշխատատեղում քիմիական նյութերի ներգործությունից աշխատողների առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու մասին կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում	1998թ. ապրիլի 7-ի «Աշխատանքի ժամանակ քիմիական ազդանյութերի հետ կապված ռիսկերից աշխատողների առողջությունը և անվտանգությունը պաշտպանելու մասին»	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն)	1-րդ կիսամյակ	41	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		Խորհրդի թիվ 98/24/EC դիրեկտիվ				
		ԸՆԴԱՄԵՆԸ			41	
			2008			
3.	«Վտանգավոր նյութերի և պատրաստուքների դասակարգման, փաթեթավորման և պիտակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1999թ. մայիսի 31-ի «Վտանգավոր պատրաստուքների դասակարգման, փաթեթավորման և պիտակավորման վերաբերյալ Անդամ Պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի 1999/45/EC դիրեկտիվ 1967թ. հունիսի 27-ի «Վտանգավոր նյութերի դասակարգմանը, փաթեթավորմանը և պիտակավորմանը վերաբերվող օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի դրույթների մոտարկման մասին» Խորհրդի թիվ 67/548/EEC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	107	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	«1998 թվականի փետրվարի 3-ի «Ագրարային կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 171 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2003թ. հունվարի 28-ի «Վտանգավոր քիմիկատների արտահանման և ներկրման մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի 304/2003 կանոնակարգ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե)	1-ին եռամսյակ	46	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	«Վտանգավոր նյութեր պարունակող խոշոր վթարների վտանգները վերահսկելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1996թ. դեկտեմբերի 9-ի «Վտանգավոր նյութեր պարունակող խոշոր վթարների վտանգները վերահսկելու մասին» Խորհրդի 96/82/EC	ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, Հայաստանի փրկարար	2-րդ եռամսյակ	60	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		դիրեկտիվ 1998թ. հունիսի 26-ի «Վտանգավոր նյութեր պարունակող խոշոր վթարների վտանգները վերահսկելու մասին Խորհրդի թիվ 96/82EC դիրեկտիվի Հոդված 9-ի համապատասխան վերապահումների համար ներդաշնակեցված չափանիշների մասին» Հանձնաժողովի թիվ 98/433/EC որոշում 2002թ. հուլիսի 17-ի «Վտանգավոր նյութեր պարունակող խոշոր վթարների վտանգները վերահսկելու մասին Խորհրդի թիվ 96/82/EC դիրեկտիվին վերաբերող հարցաշարի մասին» Հանձնաժողովի թիվ 2002/605/EC որոշում	ծառայություն)			
		ԸՆԴԱՄԵՆԸ			**213**	
			2009			
6.	«Որոշ նյութերի ռիսկերի գնահատման և վերահսկման, ինչպես նաև տեղեկատվության բացահայտման և փորձարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի որոշում	1993թ. մարտի 23-ի «Գոյություն ունեցող նյութերի ռիսկերի գնահատման և վերահսկման մասին» Խորհրդի թիվ 793/93 կանոնակարգ 2001թ. դեկտեմբերի 28-ի «Գոյություն ունեցող նյութերի ռիսկերի գնահատման և վերահսկման մասին Խորհրդի թիվ 793/93 Կանոնակարգի համաձայն՝ արտադրողների և ներմուծողների նկատմամբ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ բնապահպանության նախարարություն) (ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե) (ՀՀ առողջապահության նախարարություն)	1-ին եռամսյակ	58	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		լրացուցիչ տեղեկատվության և փորձարկման պահանջներ սահմանելու մասին» Հանձնաժողովի թիվ 2592/2001 կանոնակարգ 1999թ. հոկտեմբերի 12-ի «Գոյություն ունեցող նյութերի ռիսկերի գնահատման և վերահսկման մասին Խորհրդի թիվ 793/93 կանոնակարգի համաձայն՝ արտադրողների և ներմուծողների նկատմամբ լրացուցիչ տեղեկատվության և փորձարկման պահանջներ սահմանելու մասին» Հանձնաժողովի թիվ 2161/1999 կանոնակարգ 1997թ. հունվարի 27-ի «Խորհրդի թիվ 793/93 կանոնակարգով նախատեսված որոշակի նյութերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մասին» Հանձնաժողովի թիվ 142/97 կանոնակարգ 1994թ. հունիսի 28-ի «Խորհրդի թիվ 793/93 կանոնակարգի համաձայն մարդու և շրջակա միջավայրի համար առկա նյութերի ռիսկերի գնահատման համար սկզբունքների սահմանման մասին» Հանձնաժողովի թիվ 1488/94 կանոնակարգ				
ԸՆԴԱՄԵՆԸ					58	
ԸՆԴԱՄԵՆԸ					344	

2.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[18]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Եվրամիությունում լաբորատոր փորձարկումների համընդհանուր սկզբունքների մասին դասընթաց (3 օր/2006թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	-	ԵՄ-ում աշխատատեղում աշխատողների առողջությունն ու անվտանգությունը քիմիական նյութերի ներգործությունից ապահովելու մասին դասընթաց (3 օր/2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	-	ԵՄ-ում վտանգավոր նյութերի, քիմիկատների և պատրաստուքների դասակարգման, փաթեթավորման և պիտակավորման մասին դասընթաց (5 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն Հայաստանի փրկարար ծառայություն	Խոշոր վթարների վտանգները վերահսկման բաժին	Վտանգավոր նյութեր պարունակող խոշոր վթարների վտանգները վերահսկելու մասին դասընթաց (3 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե	-	Որոշ նյութերի ռիսկերի գնահատման և վերահսկման, ինչպես նաև տեղեկատվության բացահայտման և փորձարկման մասին դասընթաց (3 օր/2009թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
6.	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	Ռիսկերի գնահատման բաժնի ստեղծում	Մարդու և շրջակա միջավայրի համար գոյություն ունեցող նյութերի ռիսկերի գնահատման մեթոդների մասին դասընթաց (3 օր/2009թ.)	նախնական փորձաքննություն, խորհրդատվություն

[18] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

3.Դեղորայքային ապրանքներ

Ներածություն

Դեղորայքային ապրանքների բնագավառում ԵՄ օրենսդրությունը դասվում է հին մոտեցման[19] շրջանակին և ընդգրկում է տեխնիկական պահանջների ներդաշնակեցումը ու Եվրոպայում արտադրվող դեղորայքի մրցունակության բարձրացումը՝ նպատակ ունենալով ապահովել բնակչությունը, ինչպես նաև կենդանիներին առավել անվտանգ և մատչելի դեղորայքով:

Այս բնագավառում ԵՄ օրենսդրությունը[20] կարգավորում է անասնաբուժության մեջ կիրառվող դեղորայքի և բժշկության պրակտիկայում օգտագործվող դեղամիջոցների սերտիֆիկացման, դրանց նկատմամբ վերահսկման և գնային քաղաքականության իրականացման խնդիրները, ինչպես նաև այդ ապրանքատեսակներով բազմակողմ առևտուրը:

Դեղորայքային ապրանքների շրջանառության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին: ԵՄ օրենսդրությամբ նախատեսված դեղորայքային ապրանքների շրջանառության վերաբերյալ պահանջները հիմնականում արտացոլված չեն ՀՀ օրենսդրությունում: «Դեղերի մասին»[21] և «Անասնաբուժության մասին»[22] ՀՀ օրենքներով, «ՀՀ-ում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական փորձաքննության վարձի չափը հաստատելու մասին»[23] և «ՀՀ-ում անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման և դրանց պետական փորձաքննության վարձի չափը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումներով[24] սահմանված դեղերի պետական գրանցման և փորձաքննության պահանջներն ու ընթացակարգը չեն համապատասխանում ԵՄ դիրեկտիվներով նախատեսված դեղորայքային ապրանքների շուկա դուրսբերման թույլտվության պահանջներին և ընթացակարգին: Առկա են նաև բազմաթիվ տերմինաբանական անհամապատասխանություններ:

ՀՀ օրենսդրությունը մասնավորապես չի անդրադառնում մարդու օգտագործման համար դեղորայքային ապրանքների գների կարգավորման միջոցներին և դրանց թափանցիկությանը, «որբ»[25] դեղերի շրջանառությանը, իբրև «որբ» դեղորայքային ապրանք ճանաչելու և «համանման դեղորայքային ապրանք» ու «կլինիկական գերակայության» սահմանումների չափորոշիչների կիրառմանը:

Բացի այդ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ դեղորայքային ապրանքների լրացուցիչ պաշտպանության սերտիֆիկատի կիրառումը, դեղաբանական կոմիտեի իրավասությունները և այլն:

2006-2008թթ. նախատեսվում է ամբողջությամբ համապատասխանեցնել դեղորայքի ազատ տեղաշարժին վերաբերող ԵՄ օրենսդրության այն ակտերը, որոնք վերաբերում են տեխնիկական կանոնակարգերին, դեղորայքի արտոնագրմանը, «որբ» դեղերին, ինչպես նաև դեղաբանական կոմիտեի գործունեությանը[26]:

2007 թվական

Թեև 25 ապրիլի 2001 թվականի N 347 ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվում է դեղաբանական խորհրդի ստեղծում, սակայն խորհրդի իրավական կարգավիճակը և դրա լիազորությունների շրջանակը չեն համապատասխանում ԵՄ դիրեկտիվի[27] դրույթներին, ուստի կմշակվի դեղաբանական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարության հրամանի նախագիծ:

---

[19] Հին մոտեցման ներքո տեխնիկական ներդաշնակեցման միջոցառումները հիմնված են կոնկրետ արտադրանքի առանձնահատկությունների վրա և պարունակում են դրանց բնորոշ մանրամասնություններ՝ ի տարբերություն նոր մոտեցման, որը հիմնված է համապատասխանությունը գնահատելու ընդհանուր բնույթի մոտեցումների վրա (ազդեցությունը մարդու առողջության վրա և անվտանգության մակարդակը):

[20] Դեղագործական արտադրանքին առնչվող առանձին նորմեր սահմանվել են նաև ԵՄ օրենսդրության այլ ոլորտներում (մասնավորապես՝ բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող (մտավոր սեփականության օբյեկտների հետ կապված դրույթներ) և գյուղատնտեսությանը նվիրված գլուխներում):

[21] ՀՕ-259, 27.10.1998թ.:

[22] ՀՕ-16, 26.10.1999թ.:

[23] 347, 25.04.2001թ.:

[24] 1335, 09.09.1994թ.:

[25] «որբ» ՝ orphan:

[26] 2006-2008թթ. չեն մոտարկվելու ԵՄ անդամ երկրների՝ դեղորայքի ազատ տեղաշարժի գործում ներքին համագործակցության հետ կապված ակտերը (Հայաստանին ներկայիս փուլում չեն վերաբերում), ինչպես նաև ԵՄ 2 օրենսգրքեր, որոնք համապատասխանաբար վերաբերում են մարդկային օգտագործման և անասնաբուժության մեջ օգտագործման համար նախատեսված դեղորայքին: Նշված երկու օրենսգրքերի կիրարկման համար հսկայական, ինչպես օրենսդրական, այնպես էլ ինստիտուցիոնալ նախապատրաստական աշխատանքի անհրաժեշտությունը նպատահարմար են դարձնում դրանց համապատասխանեցումը 2008թ. հետո:

[27] 1975 թ. մայիսի 20-ի «Դեղագործական կոմիտե ստեղծելու մասին» Խորհրդի թիվ 75/320 որոշում:

ԵՄ համապատասխան կանոնակարգով[28] սահմանված անասնաբուժության մեջ կիրառվող դեղորայքի և բժշկության պրակտիկայում օգտագործվող դեղամիջոցներ շուկա դուրս բերելու թույլտվության պահանջներին և ընթացակարգին համապատասխանեցնելու, ինչպես նաև դրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «ՀՀ-ում անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման և դրանց պետական փորձաքննության վարձի չափը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ և «ՀՀ-ում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական փորձաքննության վարձի չափը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ:

2008 թվական

Դեղորայքային ապրանքների արտադրական մեթոդների և այդ ապրանքների բաղադրության նկատմամբ միասնական ստանդարտների և տեխնիկական պահանջների ներդաշնակեցման նպատակով Հայաստանի Հանրապետությունը կմիանա 1964 թվականի հուլիսի 22-ին Ստրասբուրգ քաղաքում ստորագրված Եվրոպական ֆարմակոպիայի ձևավորման մասին կոնվենցիային[29] և կընդունի Եվրոպական ֆարմակոպիայի կոնվենցիան վավերացնելու մասին ՀՀ Ազգային ժողովի որոշում:

Հարկ է նշել, որ ներկայումս ԵՄ-ն մինչև դեղորայքային ապրանքները շուկա հանելու թույլտվություն ստանալը և դրա վերաբերյալ համապատասխան մարմին դիմելու ժամանակահատվածը կարող է էականորեն կրճատել այդ դեղորայքի արտոնագրի գործողության ժամկետը: Նշված պայմաններում ԵՄ համապատասխան կանոնակարգով[30] սահմանված դեղորայքային ապրանքների համար լրացուցիչ պաշտպանության սերտիֆիկատի տրամադրումը կանոնակարգելու նպատակով կմշակվի «Դեղորայքային ապրանքների լրացուցիչ պաշտպանության սերտիֆիկատի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2009 թվական

ՀՀ օրենսդրությունը չի ներառում իբրև «որբ» դեղորայքային ապրանք ճանաչելու, «համանման դեղորայքային ապրանք» ու «կլինիկական գերակայության» սահմանումների չափորոշիչների մասին ԵՄ դիրեկտիվներին[31] համարժեք իրավական ակտ: Նշված դեղորայքային ապրանքների արտադրությունը խթանելու, ինչպես նաև այդ ոլորտում գիտական ուսումնասիրություններին պետական աջակցության պայմանները կարգավորելու նպատակով կմշակվի «Որբ» դեղորայքային ապրանքների գրանցման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

---

[28] 1993թ. հուլիսի 22-ի՝ «Բժշկության և անասնաբուժության համար դեղորայքային ապրանքների թույլտվության և հսկողության համայնքային գործընթացները սահմանելու և դեղորայքային ապրանքների եվրոպական գործակալության մասին» Խորհրդի թիվ 2309/93 կանոնակարգ:

[29] 1994 թ. հունիսի 16-ի «Եվրոպական Համայնքի անունից Եվրոպական Ֆարմակոպեայի ձևավորման վերաբերյալ կոնվենցիան ընդունելու մասին» Խորհրդի թիվ 94/358/EC որոշում:

[30] 1992 թ. հունիսի 18-ի՝ «Դեղորայքային ապրանքների լրացուցիչ պաշտպանության սերտիֆիկատի ստեղծման մասին» Խորհրդի թիվ 1768/92 կանոնակարգ:

[31] 1999 թ. դեկտեմբերի 16-ի՝ «Որբ» դեղերի մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 141/2000 կանոնակարգ, 2000թ. ապրիլի 27-ի՝ «Իբրև «որբ» դեղորայքային ապրանք ճանաչելու և «համանման դեղորայքային ապրանք» ու «կլինիկական գերակայության» սահմանումների չափորոշիչների կիրառման համար դրույթների սահմանման մասին» Հանձնաժողովի թիվ 847/2000 կանոնակարգ:

3.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«Դեղաբանական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարության հրամանի նախագծի մշակում	1975 թ. մայիսի 20-ի «Դեղագործական կոմիտե ստեղծելու մասին» Խորհրդի թիվ 75/320 որոշում	ՀՀ առողջապահության նախարարություն	2-րդ եռամսյակ	37	Խորհրդատվություն
2.	«ՀՀ-ում անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման և դրանց պետական փորձաքննության վարձի չափը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման «ՀՀ-ում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական փորձաքննության վարձի չափը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի մշակում	1993թ. հուլիսի 22-ի «Բժշկության և անասնաբուժության համար դեղորայքային ապրանքների թույլատվության և հսկողության Համայնքային գործընթացները սահմանելու և դեղորայքային ապրանքների Եվրոպական գործակալության մասին» Խորհրդի թիվ 2309/93 կանոնակարգ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն)	4-րդ եռամսյակ	110	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		147	
			2008			
3.	«Եվրոպական Ֆարմակոպեայի ձևավորման մասին» կոնվենցիային միացում	1994 թ. հունիսի 16-ի «Եվրոպական Համայնքի անունից Եվրոպական Ֆարմակոպեայի ձևավորման վերաբերյալ կոնվենցիան ընդունելու մասին» Խորհրդի թիվ 94/358/EC որոշում	ՀՀ առողջապահության նախարարություն	1-ին եռամսյակ	22	Խորհրդատվություն

4.	«Դեղորայքային ապրանքների լրացուցիչ պաշտպանության սերտիֆիկատի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1992 թ. հունիսի 18-ի «Դեղորայքային ապրանքների լրացուցիչ պաշտպանության սերտիֆիկատի ստեղծման մասին» Խորհրդի թիվ 1768/92 կանոնակարգ	ՀՀ առողջապահության նախարարություն	3-րդ եռամսյակ	17	Խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**39**	
2009						
5.	««Որբ» դեղորայքային ապրանքների գրանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	«Որբ դեղեր» մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի 1999 թ. դեկտեմբերի 16-ի թիվ 141/2000 կանոնակարգ 2000թ. ապրիլի 27-ի «Իբրև «որբ» դեղորայքային ապրանք ճանաչելու և «համանման դեղորայքային ապրանք» ու «կլինիկական գերակայության» սահմանումների չափորոշիչների կիրառման համար դրույթների սահմանման մասին» Հանձնաժողովի թիվ 847/2000 կանոնակարգ	ՀՀ առողջապահության նախարարություն	2-րդ եռամսյակ	27	Խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**27**	
ԸՆԴԱՄԵՆԸ					**213**	

3.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[32]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	-	ԵՄ-ում բժշկության և անասնաբուժության համար դեղորայքային ապրանքների թույլատվության և հսկողության մասին դասընթաց (5 օր/2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ առողջապահության նախարարություն	-	Եվրոպական Ֆարմակոպեայի մասին դասընթաց (3 օր/2008թ.)	Խորհրդատվություն
3.	ՀՀ առողջապահության նախարարություն	-	Եվրամիությունում դեղերի սերտիֆիկացման, դեղերի գների կարգավորման, ինչպես նաև «որբ» դեղերի մասին դասընթաց (5 օր/2009թ.)	Խորհրդատվություն

[32] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

4. Շինարարություն (Աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանություն)

Ներածություն

Շինարարությունում աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությունն մասնակիորեն համապատասխանում է ԵՄ օրենսդրությանը:

Հայաստանում աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանությունը կարգավորվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով (հոդված 110, 160, 244 և այլն)[33], «Թրթռավտանգավոր մասնագիտություններով աշխատողների աշխատանքի ռեժիմի վերաբերյալ կանոնադրությունը հաստատելու մասին» Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի և Արհեստակցական միությունների ՀՍՍՀ Հանրապետական խորհրդի թիվ 634 որոշմամբ[34], «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին» առողջապահության նախարարության թիվ 138 հրամանով[35], «Հայաստանի Հանրապետության վտանգավոր թափոնների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 874-Ն որոշմամբ[36] և այլ ենթաօրենսդրական ակտերով:

Հայաստանի Հանրապետությունում թրթռոցներից առաջացած ռիսկերից աշխատողների առողջության վրա ազդեցության և ապահովության նվազագույն պահանջների վերաբերյալ հիմնական դրույթներ սահմանված են դեռևս Խորհրդային Միության ժամանակներում 1972 թվականին ընդունված վերը նշված թիվ 634 որոշմամբ[37], որի դրույթները մասնակիորեն համապատասխանում են ԵՄ օրենսդրության պահանջներին:

Աղմուկից առաջացած ռիսկերից աշխատողների առողջության վրա ազդեցության և ապահովության նվազագույն պահանջների վերաբերյալ հիմնական դրույթները սահմանված են ՀՀ առողջապահության նախարարության 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 հրամանում: Այն սահմանում է աշխատավայրերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակները և մշտական աղմուկի բնութագրիչները սահմանելու ԵՄ պահանջներից տարբերվող մեթոդաբանություն և չի ընդգրկում դրույթներ լսողության պաշտպանության անհատական միջոցների, շաբաթվա կտրվածքով աղմուկի ազդեցության հաշվարկի, գործատուների նկատմամբ աղմուկի գնահատման և չափման պարտադիր պահանջի, աղմուկի վնասակար ազդեցության վերաբերյալ աշխատողների պարտադիր իրազեկման և աղմուկի բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված տեխնիկական ու առողջապահական միջոցառումների վերաբերյալ: Ուստիև այս բնագավառում առաջացող իրավահարաբերությունները Հայաստանում ներկայումս հստակ չեն կարգավորվում:

Ելնելով նշվածից՝ 2006-2009թթ. ընթացքում համապատասխանեցման են ենթակա հետևյալ ակտերը:

2007 թվական

ԵՄ համապատասխան կանոնակարգերով[38] աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության նպատակով սահմանված մեխանիկական թրթռոցների և աղմուկի ազդեցությունը, դրանց առաջացրած ռիսկերից աշխատողների առողջության վրա ազդեցության և ապահովության նվազագույն պահանջները կարգավորելու համար կմշակվեն աշխատատեղում աշխատողների առողջությանը վնասող աղմուկի նվազագույն պահանջները հաստատելու մասին և աշխատատեղում աշխատողների առողջությանը վնասող թրթռոցի նվազագույն պահանջները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերը:

---

[33] 16.06.1972թ.:

[34] Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի և Արհեստակցական միությունների Հայկական Հանրապետական խորհրդի թիվ 634 որոշում, 31.10.1972թ.:

[35] ՀՀԳ ՆԱՏ 2002 / 9 (95), 08.04.2002թ., հոդ.38, 06.03.2002թ.:

[36] ՀՀՊՏ 2004 / 34 (333), 30.06.2004թ., հոդ. 837, 11.12.2003թ.:

[37] Տվյալ որոշումը ուժի մեջ է մինչ այժմ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության, 20 ապրիլի 1999 թվականի թիվ 239, մինչև 1990 թվականի օգոստոսի 23-ը ՀՍՍՀ Մինիստրների սովետի, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի ընդունած և ուժը պահպանող նորմատիվ որոշումների ցանկի մասին որոշման:

[38] 2003թ. փետրվարի 6-ի՝ «Ֆիզիկական գործոնների (աղմուկ) առաջացրած ռիսկերից աշխատողների վրա ազդեցության առողջության և ապահովության նվազագույն պահանջների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2003/10/EC դիրեկտիվ, 2002թ. հունիսի 25-ի՝ «Ֆիզիկական գործոնների (թրթռոց) առաջացրած ռիսկերից աշխատողների առողջության վրա ապահովության նվազագույն պահանջների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2002/44 դիրեկտիվ:

4.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«Աշխատատեղում աշխատողների առողջությանը վնասող աղմուկի նվազագույն պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2003թ. փոտրվարի 6-ի «Ֆիզիկական գործոնների (աղմուկ) առաջացրած ռիսկերից աշխատողների վրա ազդեցության առողջության և ապահովության նվազագույն պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 2003/10/EC դիրեկտիվ	ՀՀ առողջապահության նախարարություն	2-րդ եռամսյակ	25	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	«Աշխատատեղում աշխատողների առողջությանը վնասող թրթռոցի նվազագույն պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2002թ. հունիսի 25-ի «Ֆիզիկական գործոնների (թրթռոց) առաջացրած ռիսկերից աշխատողների առողջության վրա ապահովության նվազագույն պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 2002/44 դիրեկտիվ	ՀՀ առողջապահության նախարարություն	2-րդ եռամսյակ	25	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		50	
			ԸՆԴԱՄԵՆԸ		50	

4.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[39]

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ աշխատանքի պետական տեսչություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության արդյունաբերության մեջ աշխատանքների անվտանգ կատարման և լեռնային հսկողության տեսչություն	-	Եվրամիությունում աշխատատեղում աշխատողների առողջությանը և անվտանգության պաշտպանություն նկատմամբ պահանջների մասին դասընթաց (7օր/2007թ.)	Խորհրդատվություն

[39] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

5. Կոսմետիկական ապրանքներ

Ներածություն

Կոսմետիկական ապրանքներին վերաբերող ԵՄ օրենսդրությունը[40] կարգավորում է կոսմետիկական ապրանքների բաղադրության և պիտակավորման կանոնները, սպառողներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը, ԵՄ շուկայում դրանց նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ինչպես նաև դրանց բաղադրության ստուգման մեթոդները:

Կոսմետիկական ապրանքների շրջանառությունը կարգավորող ՀՀ օրենսդրական ակտ գոյություն չունի, բացառությամբ կոսմետիկական ապրանքների վերաբերյալ սպառողներին տրամադրվող տեղեկությունների մասին դրույթներ ներառող՝ «Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առանձին տեսակների տեղեկատվության բովանդակությունը և պարտադիր պահանջների մասին տեղեկատվություն սպառողին հասցնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշմանը[41]:

Կոսմետիկական ապրանքների վերաբերյալ սպառողներին տրամադրվող տեղեկությունների մասին ՀՀ օրենսդրության դրույթներից ոչ մեկը չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին:

2008 թվական

ՀՀ-ում կոսմետիկական ապրանքների շրջանառության կանոնակարգման, դրանց բաղադրության նկատմամբ սահմանափակումներ կիրառելու, ինչպես նաև սպառողներին տեղեկատվության տրամադրման և փորձարկման պահանջներ սահմանելու նպատակով կմշակվեն «Կոսմետիկական ապրանքների մասին» և «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը:

---

[40] 1976 թվականի հուլիսի 27-ի՝ «Կոսմետիկական ապրանքների մասին անդամ երկրների օրենքների մոտեցման մասին» Խորհրդի թիվ 76/768/EEC դիրեկտիվ, 1982 թվականի մայիսի 14-ի՝ «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների մասին» Հանձնաժողովի թիվ 82/434/EEC երկրորդ դիրեկտիվ, 1980 թվականի դեկտեմբերի 22-ի՝ «Կոսմետիկական ապրանքների բաղադրության անալիզի մեթոդների մասին» Հանձնաժողովի թիվ 80/1335/EEC առաջին դիրեկտիվ, 1983 թվականի սեպտեմբերի 27-ի՝ «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների մասին» Հանձնաժողովի թիվ 83/514/EEC երրորդ դիրեկտիվ, 1985 թվականի հոկտեմբերի 11-ի՝ «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների մասին» Հանձնաժողովի թիվ 85/490/EEC չորրորդ դիրեկտիվ, 1993 թվականի սեպտեմբերի 9-ի՝ «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների մասին» Հանձնաժողովի թիվ 93/73/EEC հինգերորդ դիրեկտիվ, 1995 թվականի հուլիսի 7-ի՝ «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների մասին» Հանձնաժողովի թիվ 95/32/EEC վեցերորդ դիրեկտիվ, 1996 թվականի հուլիսի 2-ի՝ «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների մասին» Հանձնաժողովի թիվ 96/45/EEC յոթերորդ դիրեկտիվ:

[41] 1923-Ն, 07.11.2002թ.:

5.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2008			
1.	«Կոսմետիկական ապրանքների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1976թ. հուլիսի 27-ի «Կոսմետիկական ապրանքների մասին անդամ երկրների օրենքների մոտարկման մասին» Խորհրդի թիվ 76/768/EEC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	35	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	«Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1980թ. դեկտեմբերի 22-ի «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների բնագավառում անդամ պետությունների օրենսդրությունների մոտարկման մասին» Հանձնաժողովի թիվ 80/1335/EEC առաջին դիրեկտիվ 1982թ. մայիսի 14-ի «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների բնագավառում անդամ պետությունների օրենսդրությունների մոտարկման մասին» Հանձնաժողովի թիվ 82/434/EEC երկրորդ դիրեկտիվ 1983թ. սեպտեմբերի 27-ի «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	269	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		բնագավառում անդամ պետությունների օրենսդրությունների մոտարկման մասին» Հանձնաժողովի թիվ 83/514/EEC երրորդ դիրեկտիվ 1985թ. հոկտեմբերի 11-ի «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների բնագավառում անդամ երկրների օրենսդրությունների մոտարկման մասին» Հանձնաժողովի թիվ 85/490/EEC չորրորդ դիրեկտիվ 1993թ. սեպտեմբերի 9-ի «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների մասին» Հանձնաժողովի թիվ 93/73/EEC հինգերորդ դիրեկտիվ 1995 թվականի հուլիսի 7-ի «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների մասին» Հանձնաժողովի թիվ 95/32 վեցերորդ դիրեկտիվ 1996թ. հուլիսի 2-ի «Կոսմետիկական ապրանքների բաղադրության ստուգման մեթոդների մասին» Հանձնաժողովի թիվ 96/45/EEC յոթերորդ դիրեկտիվ				
ԸՆԴԱՄԵՆԸ					304	
ԸՆԴԱՄԵՆԸ					304	

5.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[42]

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	-	Եվրամիությունում կոսմետիկական ապրանքների տեղաշարժի կարգավորման մասին դասընթաց (7 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[42] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

6. Չափագիտություն

Ներածություն

Չափագիտության բնագավառի ԵՄ օրենսդրությունը[43] դասվում է նոր մոտեցման շրջանակին և կարգավորում է ԵՄ ներքին շուկայում չափման գործիքների ազատ տեղաշարժը, տալիս է չափման գործիքների միասնական սահմանումը՝ չափագիտական պահանջներ օգտագործողների և սպառողների արդյունավետ պաշտպանությունը ապահովելու նպատակով, սահմանում է չափիչ սարքերի ստուգման ենթակա ֆիզիկական և տեխնիկական միասնական բնութագրերը, դրանց սահմանների որոշման բանաձևերը, համապատասխանության հավաստման համար կիրառելի սխեմաները և այլն:

Հայաստանում չափագիտության բնագավառում գործող նորմատիվ իրավական ակտերի շարքին են դասվում «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքը,[44] «Չափման միջոցների ստուգաչափում և (կամ) ստուգաճշտում իրականացնող իրավաբանական անձանց չափագիտական ծառայությունների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը,[45] «Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը,[46] «ՀՀ-ում էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգում կիրառման համար թույլատրվող 50 հց փոփոխական հոսանքի ակտիվ էներգիայի վատտ-ժամերի ստատիկ հաշվիչներին ներկայացվող տեխնիկական պահանջների հաստատման մասին» ՀՀ էներգետիկայի նախարարության հրամանը,[47] «Խմելու ջրի ջրաչափերի նկատմամբ ներկայացվող տեխնիկական պահանջների մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարության հրամանը,[48] ինչպես նաև այլ ենթաօրենսդրական ակտեր:

Չափագիտության բնագավառում ՀՀ օրենսդրությունը հորիզոնական է, կրում է ընդհանուր ընթացակարգային բնույթ, չի ներառում չափիչ սարքերի առանձին սեկտորներին վերաբերող կանոնակարգեր (ուղղահայաց օրենսդրություն), այդ իսկ պատճառով չի կարող ապահովել ոլորտի մանրակրկիտ կարգավորում և պատշաճ վերահսկում, ուստի չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին:

Հայաստանի Հանրապետությունում չափագիտության բնագավառում հիմնական անհամապատասխանությունները հետևյալն են.

Հորիզոնական օրենսդրության մեջ բացակայում են՝

- չափիչ սարքերի բնութագրմանը վերաբերող մի շարք հասկացությունների սահմանումներ, որոնք պետք է հաշվի առնվեն սարքերի ստուգաչափման ժամանակ, մասնավորապես՝ «անվանական շահագործման ռեժիմ», «անսարքություն», «կրիտիկական փոփոխության արժեք», «կլիմայական պայմաններ», «վերարտադրողականություն», «լուծունակություն և զգայունություն», «մաշակայունություն», «լրացուցիչ սարք» և այլ հասկացություններ.
- «առավելագույն թույլատրելի շեղում» հասկացությունը և դրա վրա ազդող պայմանների մանրամասն սահմանումը: Օրինակ՝ բացակայում է սարքերի տեղադրման շրջակա միջավայրի դասակարգումը կլիմայականի, մեխանիկականի և էլեկտրամագնիսականի, ինչպես նաև դրանց ավելի մանրամասն դասակարգումը.
- կոմունալ-սպասարկման ոլորտում օգտագործվող չափիչ սարքերին ներկայացվող հատուկ պահանջները.
- չափիչ սարքերի փաթեթավորման, պիտակավորման, մակնշման և շուկայում վաճառելու կամ շահագործելու պայմանների մասին անհրաժեշտ տեղեկատվության մասին մանրամասն պահանջները.
- չափիչ սարքեր արտադրողների տեխնիկական փաստաթղթերի փաթեթին ներկայացվող մանրամասն պահանջները:

Բացակայում է չափիչ սարքերի համապատասխանության հավաստման ընթացակարգը, որը պետք է սահմանի դրանց հանդեպ լրացուցիչ պահանջներ: Եվրոպական դիրեկտիվում դա «CE» համապատասխանության նշանով մակնշումն է, որը հավաստում է սարքի համապատասխան

---

[43] 2004թ. մարտի 31-ի՝ «Չափիչ սարքերի մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2004/22/EC դիրեկտիվ, 1990թ. հունիսի 20-ի՝ «Ոչ-ավտոմատ կշռող սարքերի վերաբերյալ անդամ պետությունների օրենքների ներդաշնակեցման մասին» Խորհրդի թիվ 90/384/EEC դիրեկտիվ:
[44] ՀՕ-83-Ն, 26.05.2004թ.:
[45] 771, 25.11.2000թ.:
[46] 1170-Ն, 12.08.2004թ.:
[47] 96-ԴՋ, 22.06.1999թ.:
[48] 84, 31.05.1999թ.:

դիրեկտիվի բոլոր պահանջներին համապատասխանությունը (սարքի նախագծման, ինչպես նաև արտադրման փուլերում), և լրացուցիչ չափագիտական նշանով մակնշումը («M»): Այդ երկու նշաններով մակնշված չափման միջոցները եվրոպական շուկայում ունեն անարգել տեղաշարժի իրավունք: ՀՀ օրենսդրությամբ սահմանված է չափիչ սարքերի ստուգաչափումը և ստուգաճշտումը, սակայն ոչ ընդհանուր համապատասխանության հավաստման համատեքստում (չի նշվում, որ չափիչ սարքերի հանդեպ կիրառվում են համապատասխանության հավաստման բոլոր սխեմաները/մոդուլները): ՀՀ օրենսդրությամբ սահմանված են «չափման միջոցների ստուգաչափում և ստուգաճշտում իրականացնող իրավաբանական անձինք», այլ ոչ չափման միջոցների համապատասխանության հավաստման մարմիններ, որոնք պետք է ունակ լինեն իրականացնելու համապատասխանության հավաստում՝ ըստ համապատասխանության սխեմաներին, և հատուկ չափագիտական հավաստում: Այդ մարմիններին պետք է լիազորի ՀՀ կառավարությունը, և դրանց հավատարմագրման ոլորտի մասին պետք է ծանուցվի Եվրահամայնքին: Հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է սերտիֆիկացման մարմինների, ստուգաչափում և ստուգաճշտում իրականացնող իրավաբանական անձանց հավատարմագրում, բայց ոչ լիազորագրում:

Շուկայի վերահսկողության ոլորտում ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում վերահսկողություն իրականացնող մարմինների միջև վարչական համագործակցություն:

<u>Ուղղահայաց օրենսդրություն</u>

Ջրաչափերին, ակտիվ էլեկտրական էներգիայի չափիչներին, ջերմային էներգիայի հաշվարկի սարքերին ներկայացվող պահանջների միայն մի մասն է համապատասխանում ԵՄ պահանջներին: Բացակայում են չափիչ սարքերի ստուգման ենթակա չափագիտական, տեխնիկական պարամետրերը բնութագրող հասկացությունները, դրանց տիրույթների որոշման բանաձևերը, մի շարք այլ պահանջներ, համապատասխանող դրույթները բավարար մանրամասնությամբ չեն ներկայացված: Բացակայում են նաև սարքերի նկատմամբ կիրառելի համապատասխանության հավաստման սխեմաների մասին պահանջներ, ինչը խոչընդոտ է պատշաճ հսկողության և վերահսկողության համար[11]:

ՀՀ օրենսդրությունը չի ներառում գազաչափերի և ծավալի փոխարկման սարքերի, հեղուկների քանակի շարունակական և դինամիկ չափիչ համակարգերի, ավտոմատ կշռման սարքերի, սակահաշվիչների, նյութական չափման գործիքների, երկարության և անկյունային չափման գործիքների, արտանետված գազի անալիզատորների[11], ինչպես նաև ոչ ավտոմատ կշռող սարքերի վերաբերյալ համապատասխան կանոնակարգեր: Դրանց տեխնիկական և չափագիտական բնութագրերը սահմանված են ՀՀ ազգային ստանդարտներով, որոնց կիրառումը 2005թ. հունվարի 1-ից պարտադիր չէ, և որոնք չեն սահմանում այդ սարքերի համապատասխանության հավաստման համար կիրառելի սխեմաներ, ինչի հետևանքով բարդանում է նշված սարքերի նկատմամբ վերահսկողությունը:

Ելնելով նշվածից նախատեսվում է ՀՀ օրենսդրությունը 2008թ. ընթացքում հիմնականում համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2008 թվական

ՀՀ-ում սպառողների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու, անհրաժեշտ չափագիտական և կատարողական պահանջները սահմանելու և ոչ ավտոմատ կշռման սարքերի համար համապատասխանության հավաստման կանոններ և ընթացակարգեր սահմանելու նպատակով կմշակվի ոչ ավտոմատ կշռող սարքերի մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

ՀՀ ներքին շուկայում չափման գործիքների ազատ տեղաշարժը, դրանց ֆիզիկական, տեխնիկական համապատասխանության հավաստման համար սխեմաների կիրառման (համապատասխանության «CE» նշանի կիրառումը), ինչպես նաև չափման գործիքների շուկայահանման կամ օգտագործման վերահսկողության ապահովման նպատակով կմշակվի չափիչ սարքերի մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

6.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2008			
1.	«Ոչ ավտոմատ կշռող սարքերի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1990թ. հունիսի 20-ի «Ոչ ավտոմատ կշռող սարքերի մասին անդամ պետությունների օրենքների ներդաշնակեցման մասին» Խորհրդի թիվ 90/384/EEC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	29	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	«Չափիչ սարքերի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2004թ. մարտի 31-ի «Չափիչ սարքերի մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2004/22/EC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	53	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		82	

6.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[49]

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Եվրամիությունում չափագիտության բնագավառում ԵՄ գործող օրենսդրության վերաբերյալ դասընթաց (7 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն Չափագիտության ազգային ինստիտուտ Ստանդարտների ազգային ինստիտուտ	-		ԵՄ տեխնիկական աջակցություն և չափագիտության բնագավառում ԵՄ ստանդարտներին համապատասխան սարքավորումներով համալրման և անգնակազմի վերապատրաստման համար

[49] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ-ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

7. Խաղալիքներ

Ներածություն

Խաղալիքների շրջանառության մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքից[50] և «Խաղալիքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»[51] ՀՀ կառավարության որոշումից:

Խաղալիքների շրջանառությունը կարգավորող ՀՀ օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է ԵՄ օրենսդրության պահանջներին[52], բացառությամբ խաղալիքի սահմանման, առանց համապատասխանության նշանի խաղալիքների շուկա մուտք գործելու արգելքի և սերտիֆիկացման մարմինների մասին որոշ դրույթների: ՀՀ օրենսդրությունը չի սահմանում նաև մեկ կամ ավելի դիիզոնիլ ֆթալատի (di-iso-nonyl phthalate (DINP), դիէթիլհեքսիլ ֆթալատի (di(2-ethylhexyl) phthalate (DEHP), դիբութիլ ֆթալատի (dibutyl phthalate (DBP), դիբութիլիզոդեցիլ ֆտալատի (di-iso-decyl phthalate (DIDP), դի-N-օկթիլ ֆթալատի (di-n-octyl phthalate (DNOP), և բութիլբենզիլ ֆթալատի (butylbenzyl phthalate (BBP) սուբստանցիա պարունակող փափուկ պոլիվինիլքլորիդից (PVC) պատրաստված՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի պարագաների և խաղալիքների շուկա մուտք գործելու արգելմանը ուղղված միջոցառումներ:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ խաղալիքների նմուշառումը իրականացվում է համապատասխանության հավաստման համար մինչև շուկա մուտք գործելը: Մինչդեռ ԵՄ օրենսդրությունը սահմանում է արդեն իսկ շուկայում առկա խաղալիքների նմուշառման և ստուգման պահանջ: Բացի այդ, ՀՀ օրենսդրության դրույթը բովանդակում է այլ անհամապատասխանություններ:

Եվրոպական դիրեկտիվում դա «CE» համապատասխանության նշանով մակնշումն է, որը հավաստում է խաղալիքների համապատասխան դիրեկտիվի բոլոր պահանջներին համապատասխանությունը: Այդ նշանով մակնշված խաղալիքները Եվրոպական շուկայում ունեն անարգել տեղաշարժի իրավունք:

Թեև ՀՀ օրենսդրությունը ներառում է համապատասխանության նշանի մասին համարժեք դրույթ, սակայն այդ նշանի պատկերը տարբերվում է ԵՄ համապատասխանության նշանից:

Շուկայի վերահսկողության ոլորտում ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում վերահսկողություն իրականացնող մարմինների միջև վարչական համագործակցություն:

Նշված անհամապատասխանությունները կշտկվեն 2007-2008թթ. ընթացքում:

2007 թվական

ՀՀ շուկայում խաղալիքների ազատ տեղաշարժ ապահովելու, անվտանգության և առողջապահության պահանջները ԵՄ պահանջներին լիովին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Խաղալիքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ:

2008 թվական

Կմշակվի «Մեկ կամ ավել դիիզոնիլ ֆթալատի (di-iso-nonyl phthalate (DINP)), դիէթիլհեքսիլ ֆթալատի (di(2-ethylhexyl) phthalate (DEHP)), դիբութիլ ֆթալատի (dibutyl phthalate (DBP)), դիբութիլիզոդեցիլ ֆթալատի (di-iso-decyl phthalate (DIDP)), դի-էն-օկթիլ ֆթալատի (di-n-octyl phthalate (DNOP)), և բութիլբենզիլ ֆթալատի (butylbenzyl phthalate (BBP)) սուբստանցիա պարունակող փափուկ պոլիվինիլքլորիդից պատրաստված՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի պարագաների և խաղալիքների վերահսկման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

---

[50] ՀՕ-28, 26.05.2004թ.:

[51] 1551-Ն, 11.11.2004թ.:

[52] 1988 թվականի մայիսի 3-ի՝ «Խաղալիքների անվտանգությանը վերաբերող անդամ երկրների օրենքների մոտեցման մասին» Խորհրդի թիվ 88/378/EEC դիրեկտիվ,

1999 թվականի դեկտեմբերի 7-ի՝ «Մեկ կամ ավել դիիզոնիլ ֆթալատի (di-iso-nonyl phthalate (DINP), դիէթիլհեքսիլ ֆթալատի (di(2-ethylhexyl) phthalate (DEHP), դիբութիլ ֆթալատի (dibutyl phthalate (DBP), դիբութիլիզոդեցիլ ֆտալատի (di-iso-decyl phthalate (DIDP), դի-N-օկթիլ ֆթալատի (di-n-octyl phthalate (DNOP), և բութիլբենզիլ ֆթալատի (butylbenzyl phthalate (BBP) սուբստանցիա պարունակող փափուկ պոլիվինիլքլորիդից (PVC) պատրաստված՝ մինչև երեք տարեկան երեխայի բերանում կիրառվող երեխայի խնամքի պարագաների և խաղալիքների շուկա մուտք գործելու արգելմանը ուղղված միջոցառումների մասին» Խորհրդի թիվ 1999/815/EC դիրեկտիվ:

7.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«2004 թվականի դեկտեմբերի 11-ի «Խաղալիքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1551-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության նախագծի մշակում	1988 թվականի մայիսի 3-ի «Խաղալիքների անվտանգությանը վերաբերվող անդամ երկրների օրենքների մոտեցման մասին» Խորհրդի թիվ 88/378/EEC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	3-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն
		ԸՆԴԱՄԵՆԸ			15	
			2008			
2.	«Մեկ կամ ավել դիիզոնիլ ֆթալատի (di-iso-nonyl phthalate (DINP)), դիէթիլհեքսիլ ֆթալատի (di(2-ethylhexyl) phthalate (DEHP)), դիբութիլ ֆթալատի (dibutyl phthalate (DBP)), դիբութիլիզոդեցիլ ֆթալատի (di-iso-decyl phthalate (DIDP)), դի-էն-օկթիլ ֆթալատի (di-n-octyl phthalate (DNOP)), և բութիլբենզիլ ֆթալատի (butylbenzyl phthalate (BBP)) սուբստանցիա պարունակող փափուկ պոլիվինիլքլորիդից պատրաստված մինչև երեք տարեկան երեխայի խնամքի պարագաների և խաղալիքների վերահսկման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1999թ. դեկտեմբերի 7-ի «Մեկ կամ ավել դիիզոնիլ ֆթալատի (di-iso-nonyl phthalate (DINP)), դիէթիլհեքսիլ ֆթալատի (di(2-ethylhexyl) phthalate (DEHP)), դիբութիլ ֆթալատի (dibutyl phthalate (DBP)), դիբութիլիզոդեցիլ ֆթալատի (di-iso-decyl phthalate (DIDP)), դի-էն-օկթիլ ֆթալատի (di-n-octyl phthalate (DNOP)), և բութիլբենզիլ ֆթալատի (butylbenzyl phthalate (BBP)) սուբստանցիա պարունակող փափուկ պոլիվինիլքլորիդից պատրաստված մինչև երեք տարեկան երեխայի բերանում կիրառվող երեխայի խնամքի պարագաների և խաղալիքների շուկա մուտք գործելու արգելմանը ուղղված միջոցառումների մասին» Խորհրդի թիվ 1999/815/EC դիրեկտիվ	ՀՀ առողջապահության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն

ԸՆԴԱՄԵՆԸ	15	
ԸՆԴԱՄԵՆԸ	30	

7.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[53]

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	-	Եվրամիությունում խաղալիքների շուկայի տեխնիկական կանոնակարգման վերաբերյալ դասընթաց (5 օր/2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[53] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

8. Բժշկական սարքեր

Ներածություն

Բժշկական սարքերի շրջանառության բնագավառում գործող ԵՄ օրենսդրությունը[54] դասվում է նոր մոտեցման շրջանակին և կարգավորում է ԵՄ-ում բժշկական սարքերի շուկահանման և դրանց շահագործման խնդիրները՝ հիվանդների և շահագործողների առողջության պաշտպանման և անվտանգության տեսակետից, ինչպես նաև այդ պրանքատեսակների ազատ տեղաշարժը ԵՄ ներքին շուկայում ապահովելու նպատակով:

Բժշկական սարքերի շրջանառությունը կարգավորող ՀՀ օրենսդրական ակտերը բացակայում են:

ԵՄ այս ոլորտի օրենսդրության մոտարկման նպատակով, ինչպես նաև Հայաստանի շուկայում բժշկական սարքերի և լրացուցիչ պարագաների, մասնավորապես՝ ակտիվ իմպլանտային բժշկական սարքերի, in vitro ախտաբանական բժշկական սարքերի շրջանառությունը կարգավորելու նպատակով 2008թ. ընթացքում կմշակվի բժշկական սարքերի մասին օրենքի նախագիծ:

---

[54] 1998թ. հոկտեմբերի 27-ի՝ «In vitro ախտորոշման բժշկական սարքերի մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 98/79 դիրեկտիվ ,
1993թ. հունիսի 14-ի՝ Բժշկական սարքերի մասին Խորհրդի թիվ 93/42/EEC դիրեկտիվ,
1990թ. հունիսի 20-ի՝ «Ակտիվ փոխպատվաստման բժշկական սարքերի մասին անդամ երկրների օրենքների մոտեցման մասին» Խորհրդի թիվ 90/385/EEC դիրեկտիվ,
2002թ. մայիսի 7-ի՝ «*In vitro* ախտորոշիչ բժշկական սարքերի տեխնիկական ընդհանուր չափանիշների մասին» Հանձնաժողովի թիվ 2002/364/EC դիրեկտիվ,
2003թ. փետրվարի 3-ի՝ «Բժշկական սարքերի մասին 92/43/EEC դիրեկտիվայի շրջանակներում կրծքի իմպլանտանտների վերադասակարգման մասին» Հանձնաժողովի թիվ 2003/12/EC դիրեկտիվ,
2003թ. ապրիլի 23-ի «Կենդանական հյուսվածքների օգտագործմամբ արտադրված բժշկական սարքերի մասին 93/42/EC դիրեկտիվով սահմանված պահանջների համաձայն՝ մասնավորեցված չափանիշների ներդրման մասին» Հանձնաժողովի թիվ 2003/32/EC դիրեկտիվ:

8.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2008			
1.	«Բժշկական սարքերի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1993թ. հունիսի 14-ի «Բժշկական սարքերի մասին» Խորհրդի թիվ 93/42/EEC դիրեկտիվ 2003թ. ապրիլի 23-ի «Կենդանական հյուսվածքների օգտագործմամբ արտադրված բժշկական սարքերի մասին թիվ 93/42/EC դիրեկտիվով սահմանված պահանջների համաձայն մանրամասն չափանիշների ներդրման մասին» Հանձնաժողովի թիվ 2003/32/EC դիրեկտիվ 2003թ. փետրվարի 3-ի «Բժշկական սարքերի մասին թիվ 93/42 դիրեկտիվի շրջանակներում կրծքի իմպլանտանտների վերադասակարգման մասին» Հանձնաժողովի թիվ 2003/12/EC դիրեկտիվ 1990թ. հունիսի 20-ի «Ակտիվ փոխպատվաստման բժշկական սարքերի մասին անդամ երկրների օրենքների մոտարկման մասին» Խորհրդի թիվ 90/385/EEC դիրեկտիվ 1998թ. հոկտեմբերի 27-ի «In	ՀՀ առողջապահության նախարարություն	1-ին եռամսյակ	241	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		vitro ախտորոշման բժշկական սարքերի մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 98/79/EC դիրեկտիվ 2002թ. մայիսի 7-ի «In vitro ախտորոշիչ բժշկական սարքերի տեխնիկական ընդհանուր չափանիշների մասին» Հանձնաժողովի թիվ 2002/364/EC որոշում				
ԸՆԴԱՄԵՆԸ					241	
ԸՆԴԱՄԵՆԸ					241	

8.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[55]

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առողջապահության նախարարություն	-	Եվրամիության շուկայում բժշկական սարքերի շրջանառության կարգավորման վերաբերյալ դասընթաց (7 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[55] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

9. Այլ սարքավորումներ և արտադրանք

Ներածություն

Այլ սարքավորումների և արտադրանքի շրջանառության բնագավառում գործող ԵՄ օրենսդրությունը կարգավորում է ԵՄ-ում ժամանցի նավերի արտադրմանը ներկայացվող անվտանգության և մակնշման պահանջները, կոշկեղենի պիտակավորմանը և տեքստիլ ապրանքների անվանումներին վերաբերող պահանջները, ինչպես նաև պայթուցիկ նյութերի շուկահանման և վերահսկման, բնափայտի և բյուրեղապակու դասակարգման խնդիրները:

Հայաստանի Հանրապետությունում այլ սարքավորումների և արտադրանքի բնագավառում գործող նորմատիվ իրավական ակտերի շարքին են դասվում «Համապատասխանության գնահատման մասին օրենքը[56], «Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը[57], «Պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների առևտրի իրականացման լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին»[58], «Պայթեցման աշխատանքների կատարման լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին»[59], «ՀՀ-ում պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների արտադրության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումները[60], ինչպես նաև ՀՀ այլ օրենքներ, կառավարության որոշումներ և ենթաօրենսդրական ակտեր:

Այլ սարքավորումների և արտադրանքի բնագավառում ՀՀ օրենսդրությունը թերի է, բացակայում են համապատասխան ուղղահայաց սեկտորների կանոնակարգերը, իսկ գոյություն ունեցող օրենսդրական ակտերը կրում են ընդհանուր բնույթ, մանրամասնեցված չեն, ուստի և հիմնականում չեն համապատասխանում ԵՄ օրենսդրությանը:

Ամբողջությամբ բացակայում են՝

- ժամանցի նավերին վերաբերող կանոնակարգը[61],
- բյուրեղապակու տեսակների արտադրությանը, մակնշմանը, համապատասխանության հավաստման մեթոդների (լաբորատոր փորձաքննության) սահմանմանը վերաբերող դրույթներ[62],
- տեքստիլի թելքի տեսակից կախված տեքստիլ արտադրանքի հատուկ մակնշմանը, թելքերի տեսակների անվանումներին և բնութագրմանը վերաբերող դրույթներ[63],
- կոշկեղենի արտադրության համար օգտագործվող բնական և արհեստական կաշվի, ներբանի հատուկ մակնշման վերաբերյալ դրույթներ[64],
- բնափայտի դասակարգմանը վերաբերող դրույթներ[65]:

Պայթուցիկ նյութերի բնագավառում ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ օրենսդրությանը միայն այն մասով, որը վերաբերվում է դրանց արտադրությանը, առևտրին, պայթուցիկ աշխատանքներ իրականացնելու լիցենզավորմանը: Մյուս մասերով՝ պայթուցիկ նյութերի արտադրության և արտադրանքի համապատասխանության հավաստման սխեմաների կիրառման, համապատասխանության գնահատման, վերահսկման, վաճառքի, արտահանման հարցերում, ՀՀ օրենսդրությունը չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը, քանի որ ՀՀ-ում նշված հարցերը սահմանվում են կարգավորման ավելի լայն ոլորտ ունեցող օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով և չեն վերաբերում զուտ պայթուցիկ նյութերին: Պայթուցիկ նյութերի մասին նշվում է զենքին կամ երկակի նշանակության ապրանքներին վերաբերող օրենսդրության մեջ, սակայն նշված ոլորտները ԵՄ օրենսդրության մեջ դասվում են «ապրանքների ազատ տեղաշարժ» գլխի

---

[56] ՀՕ-82, 26.05.2004թ.:
[57] N 1170-Ն, 12.08.2004թ.:
[58] N 1348-Ն, 08.08.2002թ.:
[59] N 1349-Ն, 08.08.2002թ.:
[60] N 2071-Ն, 28.11.2002թ.:
[61] 1994թ. հունիսի 16-ի՝ «Ժամանցի (հանգստի) նավերի վերաբերյալ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 94/25/EC դիրեկտիվ:
[62] 1969թ. դեկտեմբերի 15-ի՝ «Բյուրեղապակու վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության մոտարկման մասին» Խորհրդի թիվ 69/493/EEC դիրեկտիվ:
[63] 1996թ. դեկտեմբերի 16-ի՝ «Տեքստիլի անվանումների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 96/74/EC դիրեկտիվ:
[64] 1994թ. մարտի 23-ի՝ «Կոշկեղենի հիմնական բաղադրամասերում օգտագործվող նյութերի՝ սպառողներին վաճառելու նպատակով մակնշման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 94/11/EC դիրեկտիվ:
[65] 1968թ. հունվարի 23-ի՝ «Բնափայտի դասակարգման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության մոտարկման մասին» Խորհրդի թիվ 68/893/EEC դիրեկտիվ:

չներդաշնակեցված բնագավառին, որի կարգավորումը կրում է այլ բնույթ: Ուստի պայթուցիկ նյութերի ոլորտը ՀՀ-ում ևս կարգավորված չէ[66]:

2007 թվական

Սպառողներին վաճառքի հանված կոշկեղենի արտադրության համար օգտագործվող բնական և արհեստական կաշվի, ներբանի վերաբերյալ հատուկ մակնշման միջոցով պատշաճ և հավաստի տեղեկատվության ապահովման նպատակով կմշակվի կոշկեղենի արտադրությունում օգտագործվող նյութերի մակնշման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2008 թվական

ՀՀ շուկայում սպառողներին տեքստիլ արտադրանքի հատուկ մակնշման միջոցով կամ այդ ապրանքներին կցված այլ փաստաթղթերում տեքստիլ մանրաթելերի և այլ ապրանքների անվանումների և բնութագրմանը վերաբերյալ հավաստի տեղեկություն ապահովելու նպատակով կմշակվի տեքստիլի անվանումների մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Վերը նշված պատճառաբանությամբ կմշակվի նաև բյուրեղապակու դասակարգման և պիտակավորման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2009 թվական

ՀՀ-ում պայթուցիկ նյութերի արտադրության և արտադրանքի համապատասխանության հավաստման սխեմաների կիրառման, համապատասխանության գնահատման, վերահսկման, վաճառքի, արտահանման, ինչպես նաև այդ նյութերի փոխադրման խնդիրները կանոնակարգելու նպատակով կմշակվի խաղաղ նպատակների համար օգտագործվող պայթուցիկ նյութերի՝ շուկայում տեղադրման և նրանց նկատմամբ վերահսկողության սահմանման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

ՀՀ-ում ժամանցի նավերին վերաբերող անվտանգության և առողջության, շրջակա միջավայրի և սպառողների պաշտպանության հիմնական պահանջները կանոնակարգելու նպատակով կմշակվի ժամանցի (հանգստի) նավերին ներկայացվող տեխնիկական պահանջների մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Նպատակ ունենալով կարգավորելու Հայաստանի Հանրապետության շուկայում բնափայտի շրջանառությունը՝ կմշակվի նաև բնափայտի դասակարգման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

---

[66] 1993թ. ապրիլի 5-ի՝ «Քաղաքացիական նպատակների համար օգտագործվող պայթուցիկ նյութերի շուկա հանելու և վերահսկելու հետ կապված դրույթների ներդաշնակեցման մասին» Խորհրդի թիվ 93/15/EEC դիրեկտիվ,
2004թ. ապրիլի 15-ի՝ «Համայնքի ներսում պայթուցիկ նյութերի փոխադրման վերաբերյալ փաստաթղթի (համար C(2004)1332 փաստաթղթով ծանուցված) մասին» Կոմիտեի թիվ 2004/388/EC որոշում:

9.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«Կոշկեղենի արտադրությունում օգտագործվող նյութերի մակնշման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1994թ. մարտի 23-ի «Կոշկեղենի հիմնական բաղադրամասերում օգտագործվող նյութերի՝ սպառողներին վաճառելու նպատակով մակնշման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 94/11/EC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		15	
			2008			
2.	«Տեքստիլի անվանումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1996թ. դեկտեմբերի 16-ի «Տեքստիլի անվանումների մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 96/74/EC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	25	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	«Բյուրեղապակու դասակարգման և պիտակավորման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1969թ. դեկտեմբերի 15-ի «Բյուրեղապակու վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության մոտարկման մասին» Խորհրդի թիվ 69/493/EEC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն)	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		40	
			2009			
5.	«Բնափայտի դասակարգման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1968թ. հունվարի 23-ի «Բնափայտի դասակարգման վերաբերյալ անդամ պետությունների	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ բնապահպանության նախարարություն)	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		օրենսդրությունների մոտարկման մասին» Խորհրդի թիվ 68/89/EEC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն			
6.	«Խաղաղ նպատակների համար օգտագործվող պայթուցիկ նյութերի՝ շուկայում տեղադրման և նրանց նկատմամբ վերահսկողության սահմանման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1993թ. ապրիլի 5-ի «Խաղաղ նպատակների համար օգտագործվող պայթուցիկ նյութերի շուկա հանելու և վերահսկելու հետ կապված դրույթների ներդաշնակեցման մասին» թիվ 93/15/EEC դիրեկտիվ 2004թ. ապրիլի 15-ի «Համայնքի ներսում պայթուցիկ նյութերի փոխադրման վերաբերյալ փաստաթղթի (համար C(2004)1332 փաստաթղթով ծանուցված) մասին» Հանձնաժողովի թիվ 2004/388/EC որոշում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ ԿԱ ոստիկանություն, Հայաստանի փրկարար ծառայություն)	2-րդ եռամսյակ	74	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
	«Ժամանցի (հանգստի) նավերին ներկայացվող տեխնիկական պահանջների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1994թ. հունիսի 16-ի «Ժամանցի (հանգստի) նավերի վերաբերյալ Անդամ Պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 94/25/EC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	69	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					158	
ԸՆԴԱՄԵՆԸ					213	

9.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[67]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Եվրամիությունում կոշկեղենի, տեքստիլի և բյուրեղապակու դասակարգման և մակնշման մասին դասընթաց (3 օր/2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Եվրամիությունում տեքստիլի և բյուրեղապակու դասակարգման և մակնշման մասին դասընթաց (7 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3..	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	-	ԵՄ-ում բնափայտի դասակարգման մասին դասընթաց (3 օր/2009թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ ԿԱ ոստիկանություն Հայաստանի փրկարար ծառայություն	-	Պայթուցիկ նյութերի փոխադրման և խաղաղ նպատակներով օգտագործվող պայթուցիկ նյութերը շուկայում տեղադրման մասին դասընթաց (3 օր, 2009թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[67] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

10. Հորիզոնական և ընթացակարգային միջոցառումներ

Ներածություն

Ըստ անվանման՝ հորիզոնական օրենսդրությունն ու ընթացակարգային օրենսդրական միջոցառումները հատկապես կիրառվում են նոր և գլոբալ մոտեցման օրենսդրության դեպքում, որոնց հիմնական նպատակն է «ստեղծել նոր հիմքեր տեխնիկական ներդաշնակեցման համար»՝ ներդաշնակեցնելով ապրանքների համար սահմանված միայն կարևոր պահանջները և կիրառելով «ընդհանուր հղում ստանդարտներին» բանաձևը ու փոխադարձ ճանաչման սկզբունքը՝ ապրանքների ազատ տեղաշարժի հետ կապված տեխնիկական խոչընդոտները վերացնելու համար:

Հորիզոնական և ընթացակարգային միջոցառումների բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունն ընդգրկում է «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը[68], «Տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման և կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը[69], «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքը[70], «Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին»[71], «Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը հաստատելու մասին»[72] ՀՀ կառավարության որոշումները և այլ ենթաօրենսդրական ակտեր:

Հորիզոնական և ընթացակարգային միջոցառումների բնագավառում ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին:

Հայաստանի Հանրապետությունում հորիզոնական և ընթացակարգային միջոցառումների բնագավառում անհամապատասխանությունները հետևյալն են.

- բացակայում են՝
- տեղեկատվական հասարակության ծառայություններին վերաբերող, ինչպես նաև մի շարք այլ հասկացությունների սահմանումներ,
- սպեցիֆիկացիայի սահմանումը, որի վրա հիմնվում են «ստանդարտ», «տեխնիկական կանոնակարգ» հասկացությունների սահմանումները,[73]
- համապատասխանության հավաստման մարմինների լիազորման սահմանումը (հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրության մեջ մարմինները անվանվում են «սերտիֆիկացման մարմիններ», որն արդեն իսկ շեշտադրում է սերտիֆիկացման ընթացակարգի գերիշխումը համապատասխանության հավաստման մյուս եղանակների նկատմամբ): ՀՀ օրենսդրությունը նախատեսում է լիազորում միայն առանձնահատուկ դեպքերի համար, մյուս դեպքերում մարմինները ենթակա են հավատարմագրման, որը մարմինների տեխնիկական պատրաստվածության ճանաչումն է, բայց ոչ իրավական: Այլ երկրների լիազորված մարմինների հետ տեղեկատվության փոխանակման մասին պահանջը բացակայում է[74]:
- Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է ԱՀԿ-ին, նրա շրջանակներում միացել է «Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրին և այդ բնագավառում ստեղծել է ԱՀԿ-ի ծանուցման կենտրոն, ունի ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի մշակման մասին ընթացակարգ, որը հիմնականում մոտ է Եվրահամայնքի պահանջներին:

Սակայն Եվրահամայնքը ունի իր ուրույն կանոնակարգը[75] և ընթացակարգեր[15, 76]՝ առևտրում առաջացված խոչընդոտների, ինչպես նաև ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի մասին տեղեկատվության հրապարակման, փոխանակման, ծանուցման վերաբերյալ, որոնց համապատասխանող դրույթները ներկայումս բացակայում են ՀՀ օրենսդրությունում:

- Համապատասխանության հավաստման բնագավառում սահմանված սխեմաները թեպետև մոտարկված են Եվրոպական մոդուլներին և միջազգային սխեմաներին, սակայն մոդուլներում

---

[68] ՀՕ-18, 09.11.1999թ.:
[69] N 9, 11.01.2000թ.:
[70] ՀՕ-82, 26.05.2004թ.:
[71] 1170-Ն, 12.08.2004թ.:
[72] 1281-Ն, 09.09.2004թ.:
[73] 1998թ. հունիսի 22-ի՝ «Տեխնիկական ստանդարտների ու կանոնակարգերի և տեղեկատվական հասարակության ծառայությունների վերաբերյալ կանոնների բնագավառում տեղեկատվության տրամադրման ընթացակարգ սահմանելու մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 98/34/EC դիրեկտիվ:
[74] 1993թ. հուլիսի 22-ի՝ «Տեխնիկական ներդաշնակեցման դիրեկտիվներում օգտագործելու նպատակով՝ համապատասխանության հավաստման ընթացակարգերի տարբեր փուլերի մոդուլների և CE համապատասխանության նշանի դրոշմման և կիրառման կանոնների մասին» Խորհրդի թիվ 93/465/EEC որոշում:
[75] 1998 թ. դեկտեմբերի 7-ի՝ «Անդամ պետությունների միջև ապրանքների ազատ տեղաշարժի հետ կապված ներքին շուկայի գործելու մասին» Խորհրդի թիվ 2679/98/ EC կանոնակարգ:
[76] 1995թ. դեկտեմբերի 13-ի՝ «Համայնքի ներսում ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքներից շեղվող ազգային միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ընթացակարգը սահմանելու մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 3052/95/EC որոշում:

ընդգրկված ընթացակարգերը կրում են սխեմատիկ բնույթ, ուստի և չեն կարող երաշխավորել առաջացող իրավահարաբերությունների մանրակրկիտ կարգավորումը: Եվրոպական B, C, E, H մոդուլներին համապատասխանող սխեմաները բացակայում են[6]:

- CE նշանով արտադրանքի մակնշման իմաստը տարբերվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխանության նշանի կիրառման իմաստից: Եթե արտադրանքը կրում է CE նշանը, ապա դա նշանակում է, որ նա համապատասխանում է դրան վերաբերող Համայնքի անխտիր բոլոր ներդաշնակեցված դրույթներին, չի սահմանափակվել միայն անվտանգության դրույթներին համապատասխանությամբ և անցել է այդ արտադրանքի արտադրությունը կարգավորող դիրեկտիվով սահմանված համապատասխանության հավաստման բոլոր փուլերը: CE նշանը միակ նշանն է, որը հավաստում է, որ արտադրանքը համապատասխանում է համապարփակ (գլոբալ) մոտեցման վրա հիմնված դիրեկտիվների պահանջներին: ՀՀ օրենսդրությունը համապատասխանության սխեմաների վերաբերյալ չի հիմնված համապարփակ մոտեցման վրա, ուստի և չի ընդգրկում, օրինակ, որակի կառավարման համակարգի սերտիֆիկացման մասին ընթացակարգեր, որոնք ՀՀ-ում սահմանված են ստանդարտներով: Թեև ՀՀ օրենսդրությունը նախատեսում է համապատասխանության նշանի միակողմ ճանաչման ընթացակարգ, սակայն CE նշանի ճանաչման վերաբերյալ որոշում չի պարունակում[6]:
- Համապատասխանության հավաստման երկու փուլով իրականացման մասին (արտադրանքի նախագծման և արտադրման փուլերի ժամանակ) դրույթները բացակայում են[6]:

Ելնելով նշվածից՝ սույն ոլորտում օրենսդրական համապատասխանեցման ծրագիրը, որը ամբողջությամբ նախատեսվում է իրականացնել 2006թ. ընթացքում, հետևյալն է:

ԵՄ գլոբալ մոտեցման սկզբունքները և համապատասխանության հավաստման մանրամասն ընթացակարգերը սահմանում են ընդհանուր ուղղորդող կարգ, որը հիմնված է՝

- արտադրողների ապրանքի դիզայնի և արտադրանքի վերահսկողության ներքին գործողությունների վրա,
- երրորդ կողմի ստուգումների և արտադրողի արտադրության ներքին վերահսկողության գործողությունների վրա,
- երրորդ կողմի ապրանքի տեսակի կամ դիզայնի ստուգման և երրորդ կողմի ապրանքի կամ արտադրանքի որակի հավաստման համակարգերի հաստատման, կամ երրորդ կողմի արտադրանքի հավաստագրման վրա,
- երրորդ կողմի ապրանքների դիզայնի և արտադրանքի հավաստագրման վրա,
- երրորդ կողմի ամողջական որակի հավաստման համակարգերի հաստատման վրա:

ՀՀ-ում համապատասխանության հավաստման համար սկզբունքներ, ուղեցույցներ և մանրամասն ընթացակարգեր սահմանելու, CE մակնշման և դրա կիրառման համար ընդհանուր կանոններ սահմանելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքում, «Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին» և «Համապատասխանության նշանի, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումների մեջ:

Նպատակ ունենալով նաև տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների ընդունման թափանցիկության ապահովման բնագավառում կանոնակարգել ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի մասին տեղեկատվության հրապարակման, փոխանակման և ծանուցման վերաբերյալ իրավական դաշտը՝ կմշակվի տեխնիկական ստանդարտների ու կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Հաշվի առնելով այն, որ Հայաստանը ներկայումս չունի միջազգայնորեն ճանաչված համապատասխանության հավաստման մարմին, որը չափազանց դժվարացնում է զարգացած երկրների հետ սերտիֆիկատների երկկողմանի ճանաչման համաձայնագրերի կնքումը կմշակվի Հայաստանի Հանրապետությունում ԵՄ CE նշանի միակողմանի ընդունման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

<u>Քաղաքականության համապատասխանեցում</u>

Որակի ապահովման համակարգի բարելավման նպատակով կմշակվի Ազգային ծրագիր, որը կապահովի հավաստագրերի և փորձաքննությունների արդյունքների ճանաչման երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրերի կնքումը: Դրա շրջանակներում կդիտարկվեն նաև փորձարկման լաբորատորիաների սարքավորումների բարելավումը և վկայակոչման փորձարկման լաբորատորիայի ստեղծումը:

Ստանդարտացման բնագավառում անհրաժեշտ է, որպեսզի երկրի ստանդարտների մարմինը հանդիսանա CEN-ի անդամ (Եվրոպական ստանդարտների կազմակերպություն), սակայն այս կազմակերպության լիիրավ անդամ դառնալու համար երկիրն առաջին հերթին պետք է առնվազն 80%-ով իր ազգային ստանդարտները ներդաշնակեցնի ԵՄ ստանդարտների հետ:

Այդ նպատակով կմշակվի «Եվրոպական ստանդարտների կազմակերպության միանալու ՀՀ ծրագիր:

10.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2006			
1.	«Տեխնիկական ստանդարտների ու կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1998թ. հունիսի 22-ի «Տեխնիկական ստանդարտների ու կանոնակարգերի և տեղեկատվական հասարակության ծառայությունների վերաբերյալ կանոնների բնագավառում տեղեկատվության տրամադրման ընթացակարգ սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 98/34/EC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	• «Համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «2004 թ. օգոստոսի 12-ի «Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1170-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման	1993թ. հուլիսի 22-ի «Տեխնիկական ներդաշնակեցման դիրեկտիվներում օգտագործելու նպատակով՝ համապատասխանության հավաստման ընթացակարգերի տարբեր փուլերի մոդուլների և CE համապատասխանության նշանի դրոշմման և կիրառման կանոնների մասին» Խորհրդի թիվ 93/465/EEC որոշում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	51	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	նախագծի մշակում • 2004թ. սեպտեմբերի 9-ի «Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1281-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում • «Հայաստանի Հանրապետությունում ԵՄ CE նշանի միակողմանի ընդունման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում					
ԸՆԴԱՄԵՆԸ					66	
ԸՆԴԱՄԵՆԸ					66	

10.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[77]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Եվրամիությունում նոր և գլոբալ մոտեցման՝ ապրանքների նկատմամբ տեղնիկական պահանջների միասնական մոտեցման և CE նշանով արտադրանքի մակնշման վերաբերյալ դասընթաց (10 օր/ 2006թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին կից ստեղծել «ԵՄ ստանդարդների թարգմանչական կենտրոն» հիմնադրամ	Եվրամիությունում ստանդարտների ընդունման ի կիրառման վերաբերյալ դասընթաց (5 օր/ 2006թ.)	Խորհրդատվություն, Ֆինասական աջակցություն
3.	Որակի ապահովման համակարգի բարելավման Ազգային ծրագրի շրջանակներում ՀՀ-ում փորձարկման լաբորատորիաների սարքավորումների բարելավումը և վկայակոչման փորձարկման լաբորատորիայի ստեղծում		Փորձարկման լաբորատորիաների անձնակազմի վերապատրաստում (10 օր/2007)	Խորհրդատվություն, Ֆինասական աջակցություն

[77] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

10.3 Քաղաքականության համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2007						
1.	«Եվրոպական ստանդարտների կազմակերպությանը միանալու ծրագիր»	-	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2	Որակի ապահովման համակարգի բարելավման Ազգային ծրագիր	-	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ		
3.	ՀՀ-ում փորձարկման լաբորատորիաների սարքավորումների բարելավումները և վկայակոչման փորձարկման լաբորատորիայի ստեղծումը	-	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ		
ԸՆԴԱՄԵՆԸ					30	

11. Չներդաշնակեցված բնագավառներ

Ներածություն

Համայնքի՝ չներդաշնակեցված ոլորտներում գործող օրենսդրությունը նախատեսում է ԵՄ անդամ պետությունների տարածքից մշակութային արժեքների արտահանման արգելման, ապօրինի ճանապարհով տեղահանված ազգային հարստությունների վերադարձման և համագործակցության մեխանիզմների կարգավորում, ինչպես նաև կարգավորում է **զենք ձեռք բերելու և պահելու վերահսկման մեխանիզմները**[78]:

Հայաստանի Հանրապետությունում չներդաշնակեցված բնագավառում գործող նորմատիվ իրավական ակտերի շարքին են դասվում «Զենքի մասին»[79] ՀՀ օրենքը, «ՀՀ տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին»[80] ՀՀ կառավարության որոշումը, «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին»[81] ՀՀ օրենքը, «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին»[82] ՀՀ կառավարության որոշումը, «Մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների արտահանումը կարգավորելու մասին»[83] ՀՀ կառավարության որոշումը, ինչպես նաև ՀՀ համապատասխան այլ օրենքներ, կառավարության որոշումներ և գերատեսչական նորմատիվ ակտեր:

Չներդաշնակեցված բնագավառում ՀՀ օրենսդրությունը բավարար չափով համապատասխանում է Եվրոպական օրենսդրության պահանջներին, սակայն կան որոշ անհամապատասխանություններ, մասնավորապես զենքի ազատ տեղաշարժը կարգավորող օրենսդրության մասով:

«Զենքի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է զենքի հետ կապված իրավահարաբերությունները ընդհանուր առմամբ, այն չի ներառում ԵՄ դիրեկտիվին համապատասխան հրազենին վերաբերող կանոնակարգ:

Զենքի մասին ՀՀ օրենսդրության մեջ բացակայում են՝

- «հրազեն», «գործարքատու» (դիլեր), այլ հասկացությունների սահմանումներ, ինչպես նաև ԵՄ դիրեկտիվին համապատասխան հրազենի տեսակների սահմանումը,
- հրազենի դասակարգումը ըստ հետևյալ դասերի՝ արգելված, կառավարության լիազորագիր պահանջող, հայտարարագրման ենթակա և այլ՝ ԵՄ պահանջներին համապատասխան: Այստեղից էլ բխում են մյուս անհամապատասխանությունները, քանի որ ՀՀ օրենսդրությունը ընդհանուր բնույթի է, և չկան տարբերակված ընթացակարգեր՝ հրազենի դասից կախված,
- հրազենի անցագրի սահմանումը դիրեկտիվի պահանջներին համապատասխան: ՀՀ-ում դա թույլտվությունն է, որը, սակայն, չի համապատասխանում անցագրին ներկայացվող պահանջներին[84]:

ՀՀ-ում հրազենի օգտագործման թույլտվության գործողության ժամկետը 5 տարի տևողությամբ սահմանված է միայն ՀՀ տարածքում, իսկ արտահանելու դեպքում ավելի կարճ ժամկետներ են նախատեսված, այնինչ եվրոպական անցագիրը տրվում է 5 տարի ժամկետով[11]:

ՀՀ օրենսդրության մեջ տարբերակված մոտեցում է ցուցաբերվում ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա պետությունների քաղաքացիների՝ զենք ձեռք բերելու և կրելու իրավունքի հանդեպ, որը անթույլատրելի է եվրոպական մոտեցման տեսանկյունից: Արգելքը պետք է վերաբերի ոչ թե քաղաքացիությանը, այլ զենքի տեսակին:

Բացակայում է պետության կողմից զենք ներկրելու լիազորագրման ընթացակարգը: ՀՀ-ում արգելված է զենքի տեղափոխումը փոստով, ինչը չի համապատասխանում եվրոպական մոտեցմանը:

Չկա զենքի տեղափոխման մասին ծանուցման, ինչպես նաև զենքի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին համապատասխան ընթացակարգ[11]:

Ինչ վերաբերում է մշակութային արժեքներին, ապա ՀՀ օրենսդրությունը չի ներառում.

- մշակութային արժեքների բաժանում՝ ըստ կատեգորիաների, ըստ դրանց հնության և որոշված արժեքի՝ եվրոպական մոտեցման համաձայն,

---

[78] Հարկ է նշել, որ երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների մասով ՀՀ օրենսդրության համեմատությունը եվրոպականի հետ առաջադրանքի ներկայիս փուլում չի ներառվել, քանի որ առաջին Ազգային ծրագրի շրջանակներում միջազգային փորձագետները չեն սահմանել որպես գերակայություն:

[79] ՀՕ-246, 03.07.1998թ.:

[80] 673, 26.10.1999թ.:

[81] ՀՕ-176, 06.12.2004թ.:

[82] 236, 26.04.1995թ.:

[83] 245-Ն, 26.02.2004թ.:

[84] Խորհրդի 1991թ. հունիսի 18-ի 91/477/EEC դիրեկտիվ՝ զենքի ձեռքբերման և տիրապետման վերահսկման մասին:

- «արտահանման լիցենզիա» հասկացությունը և դրա մասին պահանջ: ՀՀ օրենսդրությունը ներառում է արտահանման իրավունքի վկայագրի մասին պահանջ, սակայն արտահանման լիցենզավորման ընթացակարգը այլ բնույթ է կրում,
- մշակութային արժեքների մաքսային ձևակերպումներ իրականացնելու իրավունք ունեցող մաքսային կետերի քանակը սահմանափակելու և դրանց մասին պետություններին տեղեկացնելու մասին պահանջ[85]:

Ապօրինի արտահանված մշակութային արժեքների վերադարձման հարցում ՀՀ-ն միացել է այդ բնագավառում գործող մի շարք կոնվենցիաների, սակայն դրանց կիրարկումը ապահովող մանրամասն ընթացակարգերը բացակայում են[86]:

2007 թվական

Նպատակ ունենալով համապատասխանեցնելու ԵՄ պահանջներին զենքի շրջանառության նկատմամբ վերահսկողության կարգավորումը, սահմանելու հրազենի այն տեսակները, որոնց ձեռքբերումը կամ տիրապետումը մասնավոր անձանց կողմից արգելվում է կամ ենթակա է պաշտոնական թույլտվության կամ հայտարարագրման՝ փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Զենքի մասին» ՀՀ օրենքում և «Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական և ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ:

2008 թվական

ՀՀ տարածքից ապօրինի ճանապարհով տեղահանված ազգային հարստությունների վերադարձնելը կանոնակարգելու նպատակով, ինչպես նաև մշակութային իրերի և հատկապես հնագիտական պեղումների վայրերից հայտնաբերված իրերի, գեղարվեստական, պատմական, կրոնական հուշակոթողների կամ հնագիտական տեղանքներից մասնատված իրերի արտահանման կարգը ԵՄ պահանջներին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքում և «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ու «ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության մշակութային արժեքների պահպանության գործակալության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումներում:

[85] Խորհրդի 1992թ. դեկտեմբերի 9-ի (EEC) No 3911/92 կանոնակարգ՝ մշակութային արժեքների արտահանման մասին:
[86] Խորհրդի 1993թ. մարտի 15-ի 93/7/ EEC դիրեկտիվ՝ անդամ պետության տարածքից ապօրինի արտահանված մշակութային արժեքները վերադարձնելու մասին:

11.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	• «Զենքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական և ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին » ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1991թ. հունիսի 18-ի «Զենքի ձեռքբերման և տիրապետման վերահսկման մասին» Խորհրդի թիվ 91/477/EEC դիրեկտիվ	ՀՀ ԿԱ ոստիկանություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)	1-ին եռամսյակ	26	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
		ԸՆԴԱՄԵՆԸ			26	
			2008			
2.	• «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «1995 թվականի ապրիլի 4-ի «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության թիվ 236 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման	1992թ. դեկտեմբերի 9-ի «Մշակութային արժեքների արտահանման մասին» Խորհրդի թիվ 3911/92 կանոնակարգ 1993թ. մարդի 15-ի «Անդամ պետության տարածքից ապօրինի արտահանված մշակութային արժեքները վերադարձնելու մասին» Խորհրդի թիվ 93/7/EEC դիրեկտիվ	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն (ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե)	2-րդ եռամսյակ	26	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	նախագծի մշակում					
ԸՆԴԱՄԵՆԸ					26	
ԸՆԴԱՄԵՆԸ					52	

11.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[87]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ԿԱ ոստիկանություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)	-	ԵՄ-ում զենքի ձեռքբերման և տիրապետման վերահսկման վերաբերյալ դասընթաց (3 օր/2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն (ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե)	-	ԵՄ-ում մշակութային արժեքների արտահանման և ԵՄ տարածքից ապօրինի արտահանված մշակութային արժեքները վերադարձնելու վերաբերյալ դասընթաց (3 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[87] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

12. Պետական գնումներ

Ներածություն

Պետական գնումների բնագավառում բաց և արդյունավետ մրցակցության բացակայությունը ԵՄ միասնական շուկայի ամբողջականացման և ազատ առևտրի համակարգի արդյունավետ գործելու ամենից ակնհայտ խոչընդոտներից մեկն է, հետևաբար ԵՄ օրենսդրությամբ պետական գնումների ոլորտը դասվում է ապրանքների ազատ տեղաշարժի ոլորտին:

Համայնքի՝ պետական գնումները կարգավորող ԵՄ դիրեկտիվները[88] կազմում են պետական գնումների մասին Համայնքի օրենսդրության հիմնական մասը և հիմնված են՝

- հանրային պայմանագրերի կնքումը մրցակցային դաշտ բերելու նպատակով թափանցիկություն ապահովող կանոնների վրա՝ նախապատվությունը տալով բաց կամ սահմանափակումներով թենդերներին, ինչպես նաև թենդերի մասնակիցների ընտրության հստակ չափանիշներին.
- պայմանագիր կնքող սյուբեկտների այն որոշումների արդյունավետ և արագ վերանայման վրա, որոնք խախտում են հանրային գնումների մասին Համայնքի օրենսդրությունը:

Պետական գնումները կարգավորող ՀՀ օրենսդրությունը բաղկացած է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից[89], մասնավորապես օրենսգրքի 31-րդ գլխի 4-րդ պարագրաֆից, «Գնումների մասին»[90] ՀՀ օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից:

Պետական գնումները կարգավորող ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը: Պետական գնումների մասին հիմնական իրավական ակտ համարվող «Գնումների մասին» օրենքը ներառում է ԵՄ օրենսդրության պահանջներին չհամապատասխանող բազմաթիվ դրույթներ: Մասնավորապես, այդ դրույթները առնչվում են գնումների կազմակերպման ձևերի և ընթացակարգերի, տեղեկատվության տրամադրման ու գնումների մասնակիցների տեղեկացման, բողոքների քննարկման և մի շարք այլ խնդիրների հետ:

2008 թվական

Նպատակ ունենալով կարգավորել պետական կարիքների համար մատակարարման պայմանագրերի կնքման կարգը, ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման կարգը, աշխատանքների գնման պայմանագրերի, ջրամատակարարման, էներգիայի, տրանսպորտի ոլորտներում հայտերի արդյունավետ և արագ քննարկումը, ինչպես նաև մատակարարման, հանրային աշխատանքների և ծառայությունների պայմանագրերի կնքման ընթացքում չարաշահումների բացառումը՝ փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքում:

---

[88] 1989թ. դեկտեմբերի 21-ի՝ «Հանրային կարիքների համար մատակարարման և աշխատանքների կատարման պայմանագրերի հայտերի քննարկման կարգերի վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կանոնակարգերի և վարչական դրույթերի համակարգման մասին» Խորհրդի թիվ 89/665/EEC դիրեկտիվ, 1992թ. փետրվարի 25-ի՝ «Ջրի, էներգետիկայի, տրանսպորտի և հեռահաղորդակցման բնագավառում գործունեություն իրականացնող կազմակերպությունների գնումների ընթացակարգերի Համայնքի կանոնների կիրառման վերաբերյալ անդամ երկրների օրենքների, ընթացակարգերի և վարչական դրույթների մոտեցմանը դրույթերի համակարգման մասին» Խորհրդի թիվ 92/13/EEC դիրեկտիվ, 1993թ. հունիսի 14-ի՝ «Հանրային կարիքների համար մատակարարման պայմանագրերի շնորհման գործընթացների համակարգման մասին» Խորհրդի թիվ 93/36/EEC դիրեկտիվ, 1993թ. հունիսի 14-ի՝ «Հանրային կարիքների համար աշխատանքների գնման պայմանագրերի շնորհման գործընթացների համակարգման մասին» Խորհրդի թիվ 93/37/EEC դիրեկտիվ, 1992թ. հունիսի 18-ի՝ «Հանրային կարիքների համար ծառայությունների գնման պայմանագրերի շնորհման գործընթացների համակարգման մասին» Խորհրդի թիվ 92/50/EEC դիրեկտիվ:

[89] ՀՕ-239, 05.05.1998թ.:

[90] ՀՕ-160, 06.12.2004թ.:

12.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2008			
1.	«Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1989 թ. դեկտեմբերի 21-ի «Հանրային կարիքների համար մատակարարման և աշխատանքների կատարման պայմանագրերի հայտերի քննարկման կարգերի վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կանոնակարգերի և վարչական դրույթների կոորդինացման մասին» Խորհրդի թիվ 89/665/EEC դիրեկտիվ 1992թ. փետրվարի 25-ի «Ջրի, էներգետիկայի, տրանսպորտի և հեռահաղորդակցման բնագավառում գործունեություն իրականացնող կազմակերպությունների գնումների ընթացակարգերի Համայնքի կանոնների կիրառման վերաբերյալ անդամ երկրների օրենքների, ընթացակարգերի և վարչական դրույթների կոորդինացման մասին» Խորհրդի թիվ 92/13/EEC դիրեկտիվ 1992թ. հունիսի 18-ի «Հանրային կարիքների	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	3-րդ եռամսյակ	242	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		համար ծառայությունների գնման պայմանագրերի շնորհման գործընթացների կոորդինացման մասին» Խորհրդի թիվ 92/50/EEC դիրեկտիվ 1993թ. հունիսի 14-ի «Հանրային կարիքների համար մատակարարման պայմանագրերի շնորհման գործընթացների կոորդինացման մասին» Խորհրդի թիվ 93/36/EEC դիրեկտիվ 1993թ. հունիսի 14-ի «Հանրային կարիքների համար աշխատանքների գնման պայմանագրերի շնորհման գործընթացների կոորդինացման մասին» Խորհրդի թիվ 93/37/EEC դիրեկտիվ				
ԸՆԴԱՄԵՆԸ					242	

12.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[91]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	-	Եվրամիությունում պետական գնումների մասին դասընթաց (7 օր/2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[91] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ